

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ռեկտոր
Գայանե Գասպարյան

Երևան 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	3
2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ.....	32
3. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ	62
4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	77
5. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	89
6. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	96
7. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	111
8. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌԻՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	114
9. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	117
10. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	124
11. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	127

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Դառնալով բարձրագույն կրթության համաեվրոպական տարածքի մաս՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանն անմիջականորեն արձագանքում է կրթության զարգացման նոր մարտահրավերներին, ինչը նշանակում է կրթության որակի համապատասխանեցում աշխատաշուկայի արդի պահանջներին, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հնարավորությունների հասանելիության ապահովում, կրթության իրականացման սկզբունքորեն նոր միջավայրի ստեղծում:

Նոր որակի կրթությունը ենթադրում է գիտության, ուսուցման և պրակտիկայի պարտադիր եռամիասնություն, ինչն էլ անկյունաքարային հիմնադրույթ է ԵՊԼՀ-ի համար:

Ելնելով ԵՊԼՀ-ի՝ կրթության կազմակերպման և իրականացման ռազմավարական ծրագրի հիմնադրույթներից, ուսումնական աշխատանքների իրականացման գործընթացում շեշտադրվել է՝

- կրթության ձևի և բովանդակության շարունակական արդիականացումը,
- կրթության բարձր որակի ապահովումը,
- կրթության ոլորտում գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության առնչակցումը,
- դասախոսների և ուսանողների ստեղծագործական առողջ համագործակցությունը:

Սույն հաշվետվության շրջանակներում վերլուծվել են ամփոփիչ ժամանակահատվածում ԵՊԼՀ ուսումնական գծով աշխատանքները:

Իրականացվել են բազմաբնույթ գործառույթներ, որոնք վերաբերում են ոչ միայն ուսումնական գործընթացի բովանդակային բարեփոխումներին, այլ ընդգրկում են նաև կազմակերպչական այլ միջոցառումներ:

Հաշվետվության շրջանակներում անդրադարձել ենք ուսումնական գործունեության կազմակերպման և վերահսկման ներքոհիշյալ ոլորտներին՝

1. ԵՊԼՀ-Ի ԳՈՐԾՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՆՈՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Համաձայն ՀՀ Կառավարության 2014թ. հոկտեմբերի 23-ի №1191-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի՝ ԵՊԼՀ-ի ուսումնական մասը ամբիոնների հետ համատեղ կազմակերպել է բուհի գործող մասնագիտությունների բովանդակային համապատասխանության վերլուծություն ՀՀ Կառավարության կողմից ներկայացված մասնագիտությունների անվանումներին:

Արդյունքում առաջարկվել է բակալավրիատում նոր դասիչներով վերալիցենզավորել «Մասնագիտական մանկավորժություն», «Օտար լեզու և գրականություն», «Լեզվաբանություն» մասնագիտությունները: Բնականաբար պահանջվող բոլոր փաստաթղթերի հետ ներկայացվել են բովանդակային առումով բարեփոխված ուսումնական պլաններ և մեթոդական ցուցումներ:

Բակալավրիատում 2016թ. լիցենզավորվել են նաև նոր մասնագիտություններ՝ «Լրագրություն», «Քաղաքագիտություն» և «Սերվիս»:

Բուհն ուներ այս մասնագիտությունների դասավանդման մեծ փորձ, սակայն դրանց լիցենզավորումը որպես առանձին մասնագիտություններ ոչ միայն շահեկան է բուհի և ուսանողության համար, այլ նաև թելադրում է կոնկրետ պահանջներ և խնդիրներ որպես նոր մասնագիտություններ դրանք գովազդելու, ուսուցման կազմակերպման մեխանիզմները հստակեցնելու և ուսումնական պլանների ճկունության փորձաքննություն իրականացնելու տեսանկյունից:

Մասնագիտությունների այս ցանկը լիցենզավորվել է նաև բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգի համար:

ԵՊԼՀ մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերում վերալիցենզավորվել են գործող մասնագիտությունները և ներդրվել նոր՝ «Կիրառական լեզվաբանություն», «Կառավարում» մասնագիտությունները:

ԵՊԼՀ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի լիցենզավորված և վերալիցենզավորված մասնագիտությունների ամբողջական փաթեթը տե՛ս Հավելված 1 և Հավելված 2-ում:

2. ԵՊԼՀ-Ի ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Վերը նշվեց, որ վերալիցենզավորման պահանջներից ելնելով՝ վերանայվել են ԵՊԼՀ-ի բոլոր մասնագիտությունների ուսումնական պլանները և կատարվել որոշակի փոփոխություններ. մասնավորապես 2016թ. ըստ էության փոփոխվել է 023201.01.7 «Թարգմանչական գործ /ըստ լեզուների/» մասնագիտության ուսումնական պլանը բակալավրիատում և մագիստրատուրայում:

Ուսումնական կենտրոնների հետ համատեղ ստեղծվել են նոր մասնագիտությունների՝ «Լրագրություն», «Քաղաքագիտություն», «Սերվիս» բակալավրի կրթական ծրագրի ուսումնական պլանները:

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ԵՊԼՀ-ի դեկանատների և ուսումնական գործընթացին առնչվող կառուցվածքային ստորաբաժանումների հետ քննարկվել և հաստատվել են ԵՊԼՀ-ի առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրիատի և մագիստրատուրայի՝ 2015-2016 և 2016-2017 ուստարիների ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցերը:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԵՊԼՀ-ում բոլոր քննաշրջաններն անց են կացվում նախապես հաստատված ժամանակացույցի և այդ գործընթացը կարգավորող իրավական ակտերի համաձայն /ժամկետներ, սահմանված ժամանակացույց, գրավոր աշխատանքների բավարար քանակի տարբերակներ, տեսական առարկաների ամփոփումներին և լուծարումներին ընթերակայի ներկայություն և այլն/:

ԵՊԼՀ ՕԼ, ԹՄՀ, ՌՕԼՄՀ և հեռակա ուսուցման ֆակուլտետներում ըստ էության կազմակերպվել են քննաշրջանների արդյունքների վերլուծություն, վեր են հանվել առկա

խնդիրները, տրվել են համապատասխան հանձնարարականներ ուսանողների առաջադիմության, ուսուցման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Բոլոր քննաշրջաններին հաջորդել են լուծարման առաջին և երկրորդ փուլերը: Լուծարումների արդյունքներն ամփոփելուց հետո համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. նոյեմբերի 17-ի թիվ 1242-Ն որոշման II մասի 16-կետի համապատասխան կազմակերպվել են 12 կրեդիտի շրջանակում առարկայական պարտքեր ունեցող ուսանողների դիմումների հավաքագրման և լուծարումների փուլը: Ստորև ներկայացվում է ԵՊԼՀ 2015-2016 ուսումնական տարվա ձմեռային և գարնանային քննաշրջանների առաջադիմության ընդհանուր պատկերը՝

Ֆակուլտետը	Ձմեռային քննաշրջանի առաջադիմությունը	Գարնանային քննաշրջանի առաջադիմությունը
ՌՕԼՍՀՖ	65,6%	64%
ԹՄՀՖ	80%	75,5%
ՕԼՖ	70%	75,1%
Մագիստրատուրա	84,3%	72%
Հեռակա /բակալավրիատ/	55,5%	52,4%
Հեռակա /մագիստրատուրա/	75,1%	75,7%
Ընդամենը	71,7%	69,1%

<u>ՌՕԼՍՀՖ</u> Ձմեռային քննաշրջան – 65,6 Գարնանային քննաշրջան – 64	<u>ԹՄՀՖ</u> Ձմեռային քննաշրջան – 80 Գարնանային քննաշրջան – 75,5
<u>ՕԼՖ</u> Ձմեռային քննաշրջան – 70 Գարնանային քննաշրջան – 75,1	<u>Մագիստրատուրա</u> Ձմեռային քննաշրջան – 84,3 Գարնանային քննաշրջան – 72
<u>ՀԵՌԱԿԱ/բակ./</u> Ձմեռային քննաշրջան – 55,5 Գարնանային քննաշրջան – 52,4	<u>ՀԵՌԱԿԱ/մագ./</u> Ձմեռային քննաշրջան – 75,1 Գարնանային քննաշրջան – 75,7
<u>Արդյունքում՝</u>	<i>Ձմեռային քննաշրջանի առաջադիմությունը կազմում է 71,7</i>
	<i>Գարնանային քննաշրջանի առաջադիմությունը կազմում է 69,1</i>

2015-2016 ուսումնական տարվա ձմեռային և գարնանային քննաշրջանների արդյունքների ամփոփումից հետո վեր էին հանվել մի շարք թերացումներ, որոնք շտկվել են: Արդյունքում արձանագրվել է, որ

- Առավել կարևորվում է դասավանդողի՝ յուրաքանչյուր ուսանողի հանդեպ անհատական մոտեցումը, բավարար ուշադրություն է դարձվում կիսամյակային ընթացիկ գնահատականների պարբերականությանը, վերանայվում են դասավանդման մեթոդները և գնահատման չափանիշները, ինչպես նաև առարկայական նկարագրերը համապատասխանեցվել են ուսանողների ընդհանուր ծանրաբեռնվածությանը:
- Ամրապնդվել է ներֆակուլտետային և միջֆակուլտետային կապը: Համատեղ այդ աշխատանքը հնարավորություն է տվել առավել սահուն դարձնել ֆակուլտետների ամենօրյա աշխատանքը և ուսանողների շարժունակությունը:
- Օգտագործվել է ուսանողի ինքնուրույն աշխատանքը որպես խթանիչ միջոց դասընթացն էլ ավելի լավ ընկալելու և յուրացնելու համար: Ապահովվել է ուսումնական գործընթացում ուսանողների առավել ակտիվ ներգրավվածություն:


- Քննական տեսական դասընթացների նկարագրերում ներառվել է ներկայության բաղադրիչը, ամփոփիչ ստուգողական հարցումը կազմակերպվել է բանավոր, որը հնարավորություն է ընձեռել ուսանողներին ոչ միայն մասնագիտորեն, այլ հոգեբանորեն պատրաստվել ամփոփիչ ատեստավորմանը:
- Պարբերաբար վերանայվել են դասավանդման մեթոդներն ու գնահատման չափանիշները:
- Առարկայական նկարագրերը հնարավորինս համապատասխանեցվել են ուսանողների ընդհանուր ծանրաբեռնվածությանը և մասնագիտական հետաքրքրությունների շրջանակին:
- Պարբերաբար վերանայվել և անհրաժեշտ փոփոխությունների է ենթարկվել գիտելիքների ստուգման թեստային համակարգը՝ ի նպաստ ուսանողների էլքային գիտելիքների բարելավմանն ու ամրապնդմանը: Կազմվել են նոր թեստեր, որոնք ներառում են ոչ միայն բազմակի ընտրության առաջադրանքներ, այլ նաև առաջադրանքներ, որոնք միտված են խթանելու ուսանողների վերլուծական ունակությունները:
- Կազմակերպվել են մասնագիտական կրթաբլոկի առարկաների դասախոսություններ՝ օտարերկրյա և հրավիրված մասնագետների կողմից:

ԱՍՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

2015-2016 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննություններն անցկացվել են Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգի դրույթների համաձայն (հաստատված՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2011թ. հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանով):

ԵՊԼՀ-ում 2015-2016 ուստարում ամփոփիչ ատեստավորմանը մասնակցած շրջանավարտներից 1038-ը /ներառյալ վերականգնված ուսանողներ/ ստացել են ավարտական դիպլոմներ, որոնցից 148-ը՝ գերազանցության:

Ստորև ներկայացնում ենք ամփոփիչ ատեստավորմանը մասնակցած ուսանողների տվյալներն ըստ ֆակուլտետների՝



Ամփոփիչ ատեստավորման այս արդյունքները ցուցանիշ են ամբիոնների, դեկանատների, ուսումնական մասի համատեղ, արդյունավետ աշխատանքի. այն է՝

- Քննական հարցաշարերի ճկունություն, բովանդակային հագեցվածություն,
- Գնահատման չափորոշիչների հստակ սահմանում և կիրառում,
- Դեկանատների պարբերական վերահսկողություն ամփոփիչ ատեստավորման գործընթացի բոլոր օղակների հանդեպ,
- Ուսանողների հետ պարբերաբար կազմակերպված խորհրդատվություններ,
- Ուսանող-դասախոս անհատական խորհրդատվություններ,
- Քննարկված և հաստատված բակալավրական ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաներ՝ համապատասխանեցված պահանջվող չափանիշներին:

ԱՅԼ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՊԼՀ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ

- Համաձայն կրեդիտային կրթության հիմնարար սկզբունքների՝ ՀՀ-ում և այլ երկրների բուհերում սովորող ուսանողները իրենց ուսումնառության ընթացքում կարող են տեղափոխվել և ուսումնառությունը շարունակել նախընտրելի որևէ այլ ուսումնական հաստատությունում: Լինելով կրթության կազմակերպման առաջամարտիկների շարքում, որդեգրելով կրթության կազմակերպման արդի հիմնարար սկզբունքները՝ ԵՊԼՀ-ն ամեն տարի ընդունում է այլ բուհերից տեղափոխված բազմաթիվ ուսանողների: Գործընթացը ենթադրում է տեղափոխվող ուսանողի առարկայական տարբերությունների հաշվառում, ուսանողի համար համապատասխան խորհրդատվությունների կազմակերպում և հաստատված ժամանակացույցով առարկայական տարբերությունների հանձնում և հրամանագրում:
- 2016թ. այլ բարձրագույն ուսումնական հաստատություններից ԵՊԼՀ են տեղափոխվել 16 ուսանողներ, որոնց հետ կազմակերպվել է համապատասխան աշխատանք՝ կրթական նոր միջավայրին ինտեգրվելու, ԵՊԼՀ-ում կրթության կազմակերպման առանձնահատկություններին ծանոթանալու համար:
- 2016թ. միջին մասնագիտական կրթության օջախներից ԵՊԼՀ-ի բակալավրիատի 2-րդ կուրս են ընդունվել բարձր առաջադիմությամբ 58 ուսանողներ, որոնց ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը տվել է երաշխավորագիր համաձայն գործող կարգի կրթությունը համապատասխան մասնագիտության 2-րդ կուրսից շարունակելու համար:
- Դրական ձեռքբերում ենք համարում ԵՊԼՀ-ի ուսանողական համակազմի հավելումը միջին մասնագիտական կրթություն ունեցող այն ուսանողների հաշվին, ովքեր քոլեջային կրթությունից հետո ընդունվում են բակալավրիատի առաջին կուրս: Այս պարագայում նրանց ընտրությունը շատ ավելի նպատակամետ և գիտակցական է:

ԱՇԽԱՏԱՆՔ ՕՏԱՐԵՐԿՐԱԳԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողների ընդունելությունը ԵՊԼՀ-ում կազմակերպվում է համաձայն գործող կարգի:

2016թ. դրությամբ ԵՊԼՀ-ն ունի 65 սփյուռքահայ և օտարերկրացի ուսանող.

Երկիրը	Ուսանողների թիվը
Իրան	3
Վրաստան	17
Ռուսաստան	14
Թուրքմենստան	3
Ուկրաինա	1
Սիրիա	22
Սերբիա	1
Լիբանան	1
Գերմ.Դաշն.	2
Կիպրոս	1
Ընդամենը՝	65

Հետզհետե ավելանում է այն երկրների թիվը, որոնց հետ առկա պայմանագրերի, հուշագրերի և համաձայնագրերի հիման վրա օտարերկրացիները ընդունվում են ԵՊԼՀ՝ ակնկալելով ստանալ բարձրակարգ կրթություն, դառնալով մրցունակ և պահանջված մասնագետներ:

Ուսուցման կազմակերպման գործընթացում նմանօրինակ ուսանողները պահանջում են առանձնահատուկ ուշադրություն և՛ ուսումնական մասի, և՛ դեկանատների, և՛ ամբիոնների ու ԳՈՒ կենտրոնների կողմից:

Ամբիոններին տրված հանձնարարականին համապատասխան այս ուսանողների համար անգլերենով պատրաստվում են բոլոր դասընթացների նկարագրերն ու սեղմագրերը, ավելի ինտենսիվ են նրանց հետ կազմակերպվող խմբային և անհատական խորհրդատվությունները: Հայագիտության, ռուսաց և սլավոնական լեզվաբանության ամբիոնները մշակել են համապատասխան ծրագրեր և առարկայական նկարագրեր

«Հայոց լեզու» և «Ռուսաց լեզու» առարկաները առավել արդյունավետորեն և մատչելի դասավանդելու նպատակով: Հարկ է նշել, որ այդ ուսանողները վերոնշյալ առարկաներն անցնում են առանձնացված խմբերով:

4. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄ

Իր գործունեության ընթացքում ԵՊԼՀ-ն մշտապես կարևորել է ուսանողների տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների զարգացումը: Մասնագիտությունների բովանդակությամբ պայմանավորված բուհի ուսումնական պլաններում գերակշռում են գործնական բնույթի դասընթացները, ինչը համահունչ է ուսուցման և կրթության կազմակերպման արդի պահանջներին:

Ավելին, անգամ տեսական բնույթի դասընթացների նկարագրերը կազմված են այնպես, որ առարկան մասնագիտական հիմնարար գիտելիքներ հաղորդելուց բացի հնարավորություն ընձեռնի դրանք կիրառելու գործնականում, այն է՝ ավարտական աշխատանք, մագիստրոսական թեզ գրելիս: Դրանով է պայմանավորված վերոնշյալ աշխատանքների բավականին բարձր մակարդակը:

Այնուամենայնիվ բուհում խիստ կարևորվում է արտադրական և մանկավարժական պրակտիկայի կազմակերպումը, որովհետև այն միջոց է համալսարանից դուրս՝ աշխատանքային միջավայրում, դրսևորելու մասնագիտական պատրաստվածության մակարդակը:

Պրակտիկայի կազմակերպման ընթացքում մասնագիտական հմտությունների ստուգումից բացի կարևորվում է նաև աշխատանքային տարրական հմտությունների ձևավորումը, աշխատանքային կոլեկտիվին ինտեգրվելու, կատարած աշխատանքի մասին հաշվետվություն ներկայացնելու, աշխատանքի համար պատասխանատվություն ստանձնելու ունակությունները: Դրանով է պայմանավորված ԵՊԼՀ շրջանավարտների մրցունակությունը աշխատանքի շուկայում:

Բուհն ունի բազմաթիվ պայմանագրեր ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների, ճանաչված ձեռնարկությունների, կազմակերպությունների, տնտեսության մասնավոր սեկտորը ներկայացնող հիմնարկների հետ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որը այսօր ուսանողների մի մասն աշխատում է, բուհը հնարավորություն է ընձեռնում պրակտիկան անցկացնել իր աշխատավայրում, եթե ուսանողը կատարում է համապատասխան մասնագիտական աշխատանք:

Պրակտիկայի կազմակերպման գործընթացում պակաս կարևոր չէ ուսանողների հաշվետվությունների և պորտֆոլիոների ներկայացումը: Այդ հաշվետվությունները տալիս են պրակտիկայի կազմակերպման գործընթացի գնահատման և ավելի արդյունավետ միջոցներ փնտրելու և կիրառելու հնարավորություն:

ԵՊԼՀ-ում պարբերաբար անդրադառնում են պրակտիկայի կազմակերպման արդյունավետության բարձրացման խնդիրներին: Ստորև ներկայացնում ենք մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կողմից կատարված լրամշակումը՝ «Նոր մոտեցում մանկավարժական պրակտիկային» վերնագրով:

Մանկավարժական կրթության ժամանակակից ամենակարևոր խնդիրներից մեկը ուսուցման տեսականացման հաղթահարումն է: Ապագա մանկավարժների ուսումնական պրակտիկան նախապատրաստվում է հոգեբանամանկավարժական առարկաների, օտար լեզուների դասավանդման մեթոդիկաների և մի շարք կամընտրական առարկաների ժամանակ: Ուսանողների մանկավարժական պրակտիկ կարողությունների ձևավորման և ամրապնդման նպատակով մենք իրականացրել ենք ուսումնական գործընթացի հնարավորությունների գնահատում, որի արդյունքում ընդլայնեցինք օտար լեզվի ուսուցչի պրակտիկ կարողությունների ձևավորմանը միտված ուղիները:

Առաջին փուլում կատարվեց մասնագիտական չափորոշիչների ուսումնասիրություն, որը հիմք հանդիսացավ ուսումնական պլանում ներգրավված առարկաների ակնկալվող արդյունքները ՈԱՇ-ին և մասնագիտական չափորոշիչներին համապատասխանությունը ուսումնասիրելու համար: Այդ ուսումնասիրությունը հնարավորություն տվեց հստակ պատկերացնել այն վերջնարդյունքները, որոնք պետք է ներկալացված լինեն մասնագիտական կոմպետենցիաներով: Այս ամենի հիման վրա ամբիոնը մշակել և փորձարկել է շարունակական պրակտիկայի նոր մոտեցում, որը նպատակ ունի վերացնել նշված ճեղքվածքը.

ա/ պրակտիկան կազմակերպվել է փուլերով, ամեն փուլի համար մշակվել և ուսանողներին են առաջարկվել համապատասխան հանձնարարականներ՝ ուսանողին ուղորդել ենք որոշակի գործունեության, որը նպաստում է մասնագիտական կարողությունների և հմտությունների քայլ առ քայլ ձևավորմանը: Դիտարկման փուլի հանձնարարությունները արդեն ուսանողի ինքնուրույն աշխատանքի մաս են կազմում և ներառվում են նրա թղթապանակում:

բ/ կազմակերպվել է սիմուլյացիոն ուսումնառություն, որտեղ ընդգրկվում են կոնկրետ առաջադրանքի կազմակերպումը և իրականացումը, իսկ դա հաջողությամբ վերաստեղծում է իսկական իրավիճակի մթնոլորտը, պայմանները և դժվարությունները:

գ/ տեսական նյութի մատուցման ընթացքում կիրառվել են ուսուցման ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ, որոնք ուսանողներին մղում են ակտիվ գործունեության և նպաստում են ոչ միայն գիտելիքների ձեռքբերմանը այլև մասնագիտական կարողությունների ձևավորմանը,

դ/ սեմինարների ժամանակ ուսանողներին տրվում են այնպիսի ուսումնական հանձնարարություններ, որոնք նպաստում են մասնագիտական որոշակի կարողությունների ձևավորմանը և սեմինարների առավել աշխույժ անցկացմանը,

ե/ ուսանողի ուսումնահետազոտական աշխատանքներում /ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ/ ներառվում են գործնական հետազոտություններ, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել համագործակցություն դպրոցի հետ,

ժ/ կազմակերպվում և իրականացվում է անընդմեջ պրակտիկան, որը տևում է վեց շաբաթ,

զ/ կիսամյակի կամ ողջ ուսումնական տարվա ընթացքում ուսանողի կատարած աշխատանքները հավաքվում են թղթապանակում. որն էլ հնարավորություն է տալիս նրա կողմից նյութի ընկալման և կարողությունների ձևավորման մակարդակի վերաբերյալ հանգել որոշակի եզրակացության,

ի/ ամառային կամ ճամբարային պրակտիկա, որն իրականացվում է կամավորականության սկզբունքով, սակայն ուսանողների ընդհանուր պրակտիկայի բազմաբաղադրիչ գնահատմանը գումարվում է 20% այդ աշխատանքները իրականացնելու համար:

5. ԵՊԼՀ-Ի ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԵՐԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ

ԵՊԼՀ-ն ակտիվորեն համագործակցում է արտերկրի կրթական հաստատությունների, ՀՀ-ում ԴԱԱԴ-ի, միջազգային այլ կառույցների հետ ուսումնական ծրագրերի, ուսանողների փոխանակման, համատեղ գիտաժողովների կազմակերպման շրջանակներում: Այս շրջանակներում բուհն ունի համագործակցության մի շարք պայմանագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում վերոնշյալ կառույցների աջակցությամբ կազմակերպվել և իրականացվել են հետևյալ ծրագրերը.

1. Ս.Վարդանյանը 10.2015. – 09.2016 Սաքսոնիա-Անհալթի 1-ամյա հետազոտական կրթաթոշակ
2. Է. Ղազարյան - 2016թ. հունիս - հուլիս ամիսներին ԴԱԱԴ-ի հետազոտական կրթաթոշակ, Հալլե-Վիթթենբերգի Մարտին Լութերի համալսարան
3. Է. Ավագյան - 2016թ. հունիս - հուլիս ամիսներին «Գերմանիստիկայի ինստիտուտների համագործակցություն» ծրագրի շրջանակներում ԴԱԱԴ-ֆինանսավորմամբ, Հալլե-Վիթթենբերգի Մարտին Լութերի համալսարան
4. Մ. Նավասարդյան – 2016թ. հուլիս-օգոստոս ամիսներին «Գերմանիստիկայի ինստիտուտների համագործակցություն» ծրագրի շրջանակներում ԴԱԱԴ-ֆինանսավորմամբ, Հալլե-Վիթթենբերգի Մարտին Լութերի համալսարան
5. Ե. Էթարյան – 2016 հուլիս-օգոստոս ամիսներին ԴԱԱԴ-ի կարճաժամկետ հետազոտական կրթաթոշակ, Դյուսելդորֆի համալսարան
6. Կ. Հովհաննիսյան – 2016 հունիսին Գյոթե ինստիտուտի վերապատրաստում Դրեզդենում
7. Ա. Սարիբեկյան – 10.2016 – 09.2016 ԴԱԱԴ հետազոտական կրթաթոշակ Մայնցի համալսարան
8. 2016թ. ապրիլ-հուլիս ամիսներին Մերի Հակոբյանը «Գերմանիստիկայի ինստիտուտների համագործակցություն» ծրագրի շրջանակներում ԴԱԱԴ կիսամյակային կրթաթոշակով ուսանել է Հալլե-Վիթթենբերգի համալսարանում

9. 2016թ. հոկտեմբեր-փետրվար ամիսներին Մարիամ Ավետիսյանը «Գերմանիատիկայի ինստիտուտների համագործակցություն» ծրագրի շրջանակներում ԴԱԱԴ կիսամյակային կրթաթոշակով գտնվում է Հալլե-Վիթենբերգի համալսարանում
10. Հ. Բարսեղյան «Հատուկ անունների քերականական առանձնահատկությունները գերմաներենում և հայերենում» գիտական զեկուցում FZ DiMOS, Budapest 2016
11. Հ. Բարսեղյան «Գերմաներեն լեզվի պատմական և ներկայիս տեղը Հայաստանի հանրապետությունում» գիտական զեկուցում, BRD, Regensburg 2016
12. 2016 թ. գերմաներեն բաժնի 9 ուսանող ստացել են Գերմանիայում ամառային դպրոցի կրթաթոշակ

6. ԵՊԼՀ-Ի ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ	Վճարովի	Անվճար	Ընդհանուր
ՌՕԼՄՀՖ	99	20	119
ԹՄՀՖ	1216	72	1288
ՕԼՖ	728	94	822
Հեռակա	344	-	344
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ	Վճարովի	Անվճար	Ընդհանուր
Մագիստր. /առկա+հեռ./	397	130	527
ԱՄՊԻՐԱՆՏՈՒՐԱ	Վճարովի	Անվճար	Ընդհանուր
Ասպիրանտ /առկա+հեռ./, հայցորդ	88	41	129
Ընդամենը 2016	2872	357	3229

<u>ՌՕԼՄՀՖ (բակ.)</u> Ընդհանուր՝ 119 Անվճար՝ 20 Վճարովի՝ 99	<u>ԹՄՀՖ (բակ.)</u> Ընդհանուր՝ 1288 Անվճար՝ 72 Վճարովի՝ 1216	<u>ՕԼՖ (բակ.)</u> Ընդհանուր՝ 822 Անվճար՝ 94 Վճարովի՝ 728	<u>Ընդամենը՝ 2015թ.</u> Ընդհանուր՝ 3299 Անվճար՝ 357 Վճարովի՝ 2872
<u>Հեռակա (բակ.)</u> Ընդհանուր՝ 344 Անվճար՝ - Վճարովի՝ 344	<u>Մագիստրատուրա</u> Ընդհանուր՝ 527 Անվճար՝ 130 Վճարովի՝ 397	<u>Ասպիրանտուրա</u> Ընդհանուր՝ 129 Անվճար՝ 41 Վճարովի՝ 88	

ԵՊԼՀ բակալավրիատի ուսանողների քանակն ըստ մասնագիտությունների /տեղա ուսուցում/

Մասնագիտություն	Կուրս				Ընդամենը
	1	2	3	4	
Լեզվաբանություն	68	83	81	105	337
Թարգմանչական գործ /անգ-հայ/	77	95	69	87	328
Թարգմանչական գործ /իտալ-հայ/	2	-	2	-	4
Թարգմանչական գործ/ֆրանս-հայ/	10	4	6	5	25
Թարգմանչական գործ/գերմ-հայ/	7	6	7	3	23
Թարգմանչական գործ/ռուս-անգլ-հայ/	27	37	36	24	124
Թարգմանչական գործ/չին-հայ/	10	4	8	-	22
Թարգմանչական գործ/կորեերոն-հայ/	3	5	6	-	14
Թարգմանչական գործ /իսպ-հայ/	4	3	-	-	7
Միջմշակութային հաղորդակցություն	183	167	203	226	779
Մասնագիտական մանկավարժություն	85	152	104	145	486
Օտար լեզու և գրականություն /բանասիրություն/	3	8	12	3	26
Սերվիս	4	15	-	-	19
Լրագրություն	4	-	-	-	4
Քաղաքագիտություն	9	22	-	-	31
Ընդամենը	496	601	534	598	2229

ԵՊԼՀ մագիստրատուրայի ուսանողների քանակը ըստ մասնագիտությունների /առկա ուսուցում/.

Մասնագիտության անվանումը	2016-2017 ուստարի				Ընդամենը
	II կուրս		I կուրս		
	Անվճ.	Վճ.	Անվճ.	Վճ.	
ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	4	-	4	2	10
ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	-	-	1	3	4
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3	1	4	5	13
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	3	-	8	-	11
ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	15	7	15	33	70
ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ	-	1	2	-	3
ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԳՈՐԾ	7	-	10	16	33
ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԳՈՐԾ /անգլ-հայ/	1	-	4	9	14
ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԳՈՐԾ /ֆրանս-հայ/	3	-	1	1	5
ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԳՈՐԾ /գերմ-հայ/	1	-	1	2	4
ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԳՈՐԾ /ռուս-անգլ-հայ/	2	-	4	4	10
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ	8	3	8	23	42
ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ /բանասիրություն/	5	-	8	3	16
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	-	6	3	16	25
ԵՎՐՈՊԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	2	-	5	-	7
ՍԵՐՎԻՍ	7	1	8	7	23
Ընդամենը '	61	19	86	124	290

ԵՊԼՀ բակալավրիատի ուսանողների քանակը ըստ մասնագիտությունների /հեռակա ուսուցում/

Մասնագիտության անվանումը	Կուրս					Ընդամենը
	1	2	3	4	5	
Մասնագիտական մանկավարժություն	17	20	35	58	-	130
Լեզվաբանություն	17	28	10	-	-	55
Միջմշակութային հաղորդակցություն	30	42	46	41	-	159
Ընդամենը	64	90	91	99	-	344

ԵՊԼՀ մագիստրատուրայի ուսանողների քանակն ըստ մասնագիտությունների /հեռակա ուսուցում/

Մասնագիտության անվանումը	Ուստարի						Ընդամենը
	I կուրս		II կուրս		ավարտողներ		
	Անվճ.	Վճ.	Անվճ.	Վճ.	Անվճ.	Վճ.	
ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	-	2	-	6	-	-	8
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	-	12	-	12	-	24	48
ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	-	19	-	12	-	70	101
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ	-	34	-	40	-	39	113
ԸՆԴԱՄԵՆԸ	-	67	-	70	-	133	270

7. ԵՊԼՀ-Ի ՎԱՐՉԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԾԺԱՆԴԱԿ ԵՎ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՊԼՀ-ն կրթական, գիտական և վարչական իր գործառնություններն իրականացնում է վարչական, ուսումնառական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի օգնությամբ: Բուհն ունի վարչական 63 աշխատող, ուսումնառական անձնակազմ՝ 55: Բուհում դասավանդում են 216 դասախոս, որոնց միջին տարիքը 44-46 տարեկանն է: Դասախոս-ուսանող համամասնության արդյունքում՝

• Ուսանող/վարչական կազմ	-	52/1
• Ուսանող/ուսումնառական անձնակազմ	-	60/1
• Ուսանող/դասախոս	-	15/1

8. ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

2011թ. -ից Կարիերայի կենտրոնի կողմից ԵՊԼՀ-ում իրականացվում է EVS «Եվրոպական կամավորական ծառայություն» ծրագիրը, որը ֆինանսավորվում է Եվրոմիության «Էրազմուս+» ծրագրի կողմից: Ծրագրի շրջանակներում ԵՊԼՀ-ն եվրոպական երկրներից հյուրընկալում է կամավորներ, ովքեր իրականացնում են համապատասխան լեզուների արտալսարանային ոչ ֆորմալ դասընթացներ ուսանողների, շրջանավարտների, աշխատակիցների համար՝ նախաձեռնելով ակումբներ, միջոցառումներ, ֆիլմերի դիտումներ և քննարկումներ: 2015-2016թթ. ԵՊԼՀ հյուրընկալել է 8 կամավոր՝

- ա/ Դանիելա Ներեչովա – Սլովակիա
- բ/ Սաբինա Մատիշիչ – Խորվաթիա
- գ/ Ալեսսանդրա Իոննինո – Գերմանիա
- դ/ Թիբալտ Վերվել – Ֆրանսիա
- ե/ Աննա Ռիկարդա Վալց – Գերմանիա
- զ/ Ալեքսանդր Պլատցներ – Սլովակիա
- է/ Իվանա Վիդովիչ – Խորվաթիա
- ը/ Կառոլին Մայսենբախեր – Գերմանիա

Կարիերայի կենտրոնի աջակցությամբ ԵՊԼՀ ուսանողները և շրջանավարտները EVS ծրագրի շրջանակներում մեկնում են եվրոպական տարբեր երկրներ՝ 2 շաբաթից մինչև 12 ամիս տևողությամբ կամավորական ծրագրերին մասնակցելու նպատակով:

ա/ Սոսե Եսայան – Լեհաստան

բ/ Նարինե Մելիքյան – Լեհաստան

գ/ Կարինե Դավթյան – Լեհաստան

դ/ Անի Պետրոսյան – Լատվիա

ե/ Աննա Հայրապետյան – Լատվիա

զ/ Ամալյա Խաչատրյան – Լիտվա

է/ Դիանա Ոսկանյան – Ֆրանսիա

ը/ Կարինե Վարդանյան – Գերմանիա

թ/ Ալետա Սերոբյան – Չեխիա

ժ/ Ալինա Դավթյան – Չեխիա

ի/ Մարի Պապյան – Բուլղարիա

2016թ. -ից Կարիերայի կենտրոնի կողմից ԵՊԼՀ-ում իրականացվում է **«Քաղաքացիական ծառայություն»** ծրագիրը, որը ֆինանսավորվում է Ֆրանսիայի Հանրապետության Կառավարության կողմից: Ծրագրի շրջանակներում ԵՊԼՀ-ն Ֆրանսիայից հյուրընկալում է կամավորներ, ովքեր իրականացնում են համապատասխան լեզուների արտալսարանային ոչ ֆորմալ դասընթացներ ուսանողների, շրջանավարտների, աշխատակիցների համար՝ նախաձեռնելով ակումբներ, միջոցառումներ, ֆիլմերի դիտումներ և քննարկումներ: 2016-2017թթ. ԵՊԼՀ հյուրընկալել է 2 կամավոր՝

ա/ Մադի Գուա – Ֆրանսիա

բ/ Աննելին Մադկե – Ֆրանսիա

ԵՊԼՀ-ի, Կարիերայի կենտրոնի և Վիվա Սել ՄՏՍ ընկերության համագործակցության արդյունքում 2015-2016 ուս. տարվա համար ԵՊԼՀ թվով 17 ուսանող ընկերության կողմից ստացել են կրթաթոշակ, իսկ 2016-2017 ուս. տարվա համար՝ 1 ուսանող:

2016թ. -ին անցկացվել է **«Բաց դռներ»** ծրագիրը, որի շրջանակներում ԵՊԼՀ-ն կազմակերպում է Երևանի և մարզերի հիմնական և ավագ դպրոցների աշակերտների այցելություն և շրջայց համալսարանում՝

ա/ 2016թ. փետրվար - Երևանի Գ. Վարդանյանի անվան թիվ 192 հիմնական դպրոց

բ/ 2016թ. փետրվար – Աբովյանի 6 ավագ դպրոց

գ/ 2016թ. փետրվար – Երևանի Ղևոնդ Ալիշանի անվան թիվ 95 միջնակարգ դպրոց

դ/ 2016թ. փետրվար - Երևանի թիվ 175 միջնակարգ դպրոց

2015-2016 և 2016-2017 ուս. տարիներում ԵՊԼՀ-ում շարունակվում է դասավանդվել **«Կարիերայի պլանավորում»** առարկան, որի նպատակն է ուսանողներին ներկայացնել աշխատաշուկան, պահանջները, աշխատաշուկա մուտք գործելու համար անհրաժեշտ հիմնական հմտությունները և այլն:

Առարկան կամընտրական է Օտար լեզուների ֆակուլտետի կրթական ծրագրերի 2-րդ կուրսում՝ ներառված Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի առարկայացանկում:

2016թ. հոկտեմբերի 20-ին Գորիս քաղաքում և հոկտեմբերի 21-ին Կապան քաղաքում իրականացվել է **«Մասնագիտությունների օր 2016»** ծրագիրը: Ծրագրի նպատակն էր ներկայացնել ԵՊԼՀ բակալավրական և մագիստրոսական ծրագրերը, ընդունելության կարգը, ինչպես նաև բուհի կողմից դասավանդվող 18 օտար լեզուները և կրթական հնարավորությունները: Գորիս քաղաքում միջոցառմանը մասնակցել է 6 դպրոց, իսկ Կապան քաղաքում՝ 11 դպրոց: Միջոցառման շրջանակներում անցկացվեց հանդիպում վերոնշյալ դպրոցների ուսուցչական կազմի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում ներկայացվեցին բուհական կրթական ծրագրերը, դպրոց-բուհ համագործակցության հնարավորությունները և այլն:

2016թ. սեպտեմբերի 26-ին Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում անցկացվեց **«Լեզուների եվրոպական օր»** միջոցառումը: Միջոցառմանը մասնակցում էին ԵՊԼՀ բոլոր ստորաբաժանումները, ինչպես նաև Երևան քաղաքի թվով 18 դպրոցներ և Աբովյան քաղաքի թիվ 6 ավագ դպրոցը:

2016թ. փետրվարի 2-ին ԵՊԼՀ Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնը, Կարիերայի կենտրոնը և Շրջանավարտների միավորումը նախաձեռնել էին կլոր սեղան-քննարկում **«Բուհ-գործատու համագործակցություն: Թարգմանչական կրթական ծրագրերի վերջնարդյունքների համաձայնեցումը գործատուների հետ»** խորագրով: Հանդիպման նպատակն էր հնարավորինս մերձեցնել բուհական կրթական ծրագրերը աշխատաշուկայի պահանջներին և համապատասխանեցնել դրանք որակավորումների ազգային շրջանակի պահանջներին՝ նպաստելով երիտասարդ մասնագետների ներգրավումը տեղական և միջազգային աշխատաշուկա:

2016թ. հոկտեմբերի 26-ին Երևանի ԵՊԼՀ Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնը, Կարիերայի կենտրոնը և Շրջանավարտների միավորումը իրականացրեցին կլոր սեղան-քննարկում **«Բուհ-գործատու համագործակցություն. Կրթության կառավարման ծրագրերի վերջնարդյունքների համաձայնեցումը գործատուների ակնկալիքների հետ»** խորագրով: Հանդիպման նպատակն էր հնարավորինս համապատասխանեցնել բուհական կրթական ծրագրերը աշխատաշուկայի պահանջներին և ՀՀ որակավորումների ազգային շրջանակի նկարագրիչներին՝ նպաստելով երիտասարդ մասնագետների ներգրավմանը տեղական և միջազգային աշխատաշուկա:

2013թ.-ից ԵՊԼՀ-ն ներգրավվել է Եվրոմիության կողմից ֆինանսավորվող **Էրասմուս Մունդուս /Erasmus Mundus/** ծրագրի շրջանակներում գործող երկու նախագծերում, որոնցից մեկը համակարգվում է Կարիերայի կենտրոնի կողմից: ***Education Force: During Mobility for EU-East Europe Cooperation (EFFORT)*** (www.erasmusmunduseffort.teithe.gr) ծրագիրը համակարգվում է Հունաստանի համալսարանի կողմից, որպես գործընկերներ ներգրավված են նաև Վրաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Մոլդովայի, Էստոնիայի, Պորտուգալիայի, Չեխիայի, Լեհաստանի, Լատվիայի, Ֆրանսիայի և Անգլիայի համալսարանները:

2015-2016 ուս. տարում բակալավրի 2 ուսանող 10 ամիս ժամկետով և ասպիրանտուրայի 1 հետազոտող 20 ամիս ժամկետով ուսանել են վերոնշյալ երկրների գործընկեր համալսարաններում՝

ա/ Մարիամ Երոյան – բակալավր / Լատվիա

բ/ Աննա Ավագյան - բակալավր / Հունաստան

զ/ Անի Հովսեփյան – հետազոտություն / Հունաստան

2016-2017 ուս. տարում բակալավրի 1 ուսանող, ասպիրանտուրայի 2 հետազոտող 10 ամիս ժամկետով ուսանում են Հունաստանի գործընկեր համալսարանում՝

ա/ Դիանա Ավագյան – բակալավր / Հունաստան

բ/ Գուրգեն Կարապետյան - հետազոտություն / Հունաստան

զ/ Հեղինե Ղարազյան – հետազոտություն / Հունաստան

2016-2017 ուս. տարում ԵՊԼՀ պրոֆեսորադասախոսական և ադմինիստրատիվ անձնակազմի 3 ներկայացուցիչ իրականացնելու է 1-ամսյա շարժունություն Պորտուգալիայի և Հունաստանի գործընկեր համալսարաններում: ԵՊԼՀ 1 դասախոս իրականացնելու է դոկտորական հետազոտություն 6 ամիս ժամկետով Հունաստանի գործընկեր համալսարանում:

2015թ.-ից ԵՊԼՀ-ն ներգրավվել է Եվրոմիության կողմից ֆինանսավորվող **Էրասմուս Պլյուս /Erasmus+/** ծրագրի շրջանակներում գործող **Կրեդիտային շարժունություն /Credit Mobility/** նախագծում՝ Լեհաստանի Լոդձի և Լատվիայի Վիդզեմե համալսարանների հետ համատեղ: Պայմանագրերի համաձայն ԵՊԼՀ ուսանողները, ԵՊԼՀ պրոֆեսորադասախոսական և ադմինիստրատիվ անձնակազմը ստանում են կրթաթոշակ՝ վերոնշյալ համալսարաններում շարժունության իրականացնելու համար:

2015 – 2016 ուս. տարվա 2-րդ կիսամյակ

ա/ Վարդուհի Սարգսյան - մագիստրատուրա / Լեհաստան 6 ամիս

2016 – 2017 ուս. տարվա 1-ին կիսամյակ

ա/ Ստելլա Մարտիրոսյան – Անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոն /Լատվիա 1 շաբաթ

2016 – 2017 ուս. տարվա 2-րդ կիսամյակ

ա/ Տաթևիկ Սևոյան - մագիստրատուրա / Լատվիա 6 ամիս

բ/ 1 ուսանող – բակալավր կամ մագիստրատուրա / Լեհաստան 6 ամիս

ԵՊԼՀ ուսանողների և շրջանավարտների հետ շարունակական կապը պահելու նպատակով 2010թ.-ից սկսած ԵՊԼՀ Կարիերայի կենտրոնը Շրջանավարտների միավորման հետ համատեղ իրականացնում է ԵՊԼՀ ուսանողների և շրջանավարտների տվյալների հավաքագրում, էլեկտրոնային բազայի ստեղծում և տվյալների պարբերաբար թարմացում:

ԵՊԼՀ ուսանողներին և շրջանավարտներին իրազեկելու և աշխատաշուկայում վերջիններիս մրցունակությունը բարձրացնելու նպատակով կենտրոնի կողմից կատարվում են հետևյալ գործողությունները՝

ա/ էլեկտրոնային հասցեների ու խմբերի, ինչպես նաև ԵՊԼՀ կայքի և սոցիալական ցանցերի միջոցով ազգային, տարածաշրջանային և միջազգային կրթական ծրագրերի, թափուր աշխատատեղերի, սեմինարների, կամավորական ծրագրերի և դասընթացների վերաբերյալ տեղեկատվության տարածում ուսանողների և շրջանավարտների շրջանում:

- 2016թ. - Կարիերայի կենտրոնի և Շրջանավարտների միավորման համատեղ ֆեյսբուքյան պաշտոնական էջ և խումբ՝ 6510 անդամ,
- 2016թ. - Կարիերայի կենտրոնի և Շրջանավարտների միավորման Google խումբ՝ 9150 անդամ:

բ/ Ամենօրյա խորհրդատվություն՝ ինքնակենսագրական, մոտիվացիոն նամակ, երաշխավորագիր, ուղեկցող նամակ կազմելու, ինչպես նաև կրթական և կամավորական ծրագրերին դիմելու և աշխատանքային հարցազրույցի ներկայանալու վերաբերյալ:

գ/ Պետական, մասնավոր և հասարակական կազմակերպություններում ինթերնշիփի կազմակերպում, որոնց շրջանակներում ուսանողներն ու շրջանավարտները վճարովի կամ կամավոր հիմունքներով ոչ պարտադիր պրակտիկա են անցնում («Յուքոմ» հեռահաղորդակցական ընկերություն, Վիվա Մեյ ՄՏՄ, Ինգո Արմենիա, Ռոստելեկոմ, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, Գործատուների հանրապետական միություն և այլն):

դ/ Պարբերաբար հանդիպումների կազմակերպում աշխատանքային գործակալությունների, պետական գերատեսչությունների, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, դիվանագիտական, ինչպես նաև բիզնեսի և

կրթական ոլորտի ներկայացուցիչների հետ, ովքեր ԵՊԼՀ ուսանողներին և շրջանավարտներին ներկայացնում են կազմակերպությունների կողմից առաջարկվող թափուր աշխատատեղերը, կրթական, երիտասարդական և կամավորական ծրագրերը, սեմինարները և դասընթացները ՀՀ-ում և արտերկրում, կրթաթոշակները և այլն:

Սեմինարները անցկացվում են նաև ԵՊԼՀ-ում հատուկ հրավիրված մասնագետների կողմից (PR գործնական թրեյնինգներ, «Ինչպես կազմել մրցունակ ինքնակեսագրական և ինչպես ներկայանալ գործատուին» և այլն):

Գործընկեր-կազմակերպություններից են Վիվա Սել ՄՏՍ ընկերությունը, «Յուքոմ» հեռահաղորդակցական ընկերությունը, Ռոստելեկոմը, Ռոսխոստրախը, Հյուր սերվիսը, Արմենիա ապահովագրական գործակալությունը, ՄԳԱ Կոնտինենտը, Երիտասարդական ակումբների դաշնությունը, Հայ առաջադեմ երիտասարդությունը, Կրթություն Հայաստանը, Հայաստանի գործատուների հանրապետական միությունը, «Գլոբբինգ» ընկերությունը, Մալխասյան Քոնսալթինգը, «Ֆինանսաբանկային քոլեջ» հիմնադրամը, Գաուդեամուս թարգմանչական գրասենյակը, Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոնը, Երևանի շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնը, Հայաստանում Էրազմուս + ծրագրի ազգային գրասենյակը, «ՀՀ Արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ, Փարիզ հոթելը և այլ կազմակերպություններ:

Հանդիպումներ և սեմինարներ

2016թ. – 31 հանդիպում և 6 սեմինար

Սեմինարների և հանդիպումների մասնակիցների թվաքանակ (ըստ գրանցման թղթի)

2016թ. – 914 մասնակից

ե/ ԵՊԼՀ ուսանողները և շրջանավարտները Կարիերայի կենտրոնի աջակցությամբ մասնակցում են մի շարք կամավորական ծրագրերի:

զ/ Համագործակցության հուշագրերի կնքում և համատեղ ծրագրերի իրականացում կազմակերպությունների հետ /Դասավանդիր, Հայաստան, Իրավաբանների հայկական ասոցիացիա և այլն/:

է/ Կարիերայի կենտրոնը պարբերաբար մասնակցում է կրթական տոնավաճառների, մասնագիտացված ցուցահանդեսների:

ը/ Կարիերայի կենտրոնը ԵՊԼՀ ուսանողներին, շրջանավարտներին և աշխատակիցներին տրամադրում է դասական համերգների, ներկայացումների հրավիրատոմսեր:

9. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

- ✓ 2015-2016 ուստարում ՀՇԿԿ-ն շարունակել է գործունեությունը լեզվական դասընթացների պրոֆիլային ծրագրով՝ նախապատրաստական դասընթացներ են իրականացվել բուհ ընդունվողների համար, որոնց մասնակիցները լավագույն ցուցանիշներով ընդունվել են հանրապետության տարբեր բուհեր, կազմակերպվել են օտար լեզուների դասընթացներ: Լեզվական դասընթացների դիմաց համալսարանի դրամարկդ է մուտքագրվել 2,776,000 դրամ:
- ✓ Մշակվել է և իրականացվում է նոր ծրագիր՝ (A1) (B2) լեզվական մակրդակների «Հայերենը որպես օտար լեզու» ՀՀ-ում Վրաստանի դեսպանատան աշխատակիցների համար:
- ✓ ՀՇԿ կենտրոնը մասնակցել է Հայաստանում Եվրամիության պատվիրակության կողմից կազմակերպված մրցույթին և ստացել ռուսաց լեզվի դասընթացների կազմակերպման և իրականացման իրավունք ԵՄ Պատվիրակության աշխատակազմի համար: 2015-2016 ուսումնական տարում ՀՇԿԿ-ն իրականացրել է նշված դասընթացը 4 լեզվական մակարդակներով: Մշակել ավարտական թեստեր և անցկացրել թեստավորում որի արդյունքում 7 ունկնդրի շնորհիվ են ավարտական վկայագրեր: ԵՄ-ի հետ տարվում են բանակցություններ նաև հաջորդ ուստարվա դասընթացների կազմակերպման համար:
- ✓ Շարունակվել է ՀՇԿ կենտրոնի՝ Տեմպուսի SSRULLI ծրագրի շրջանակներում կենտրոնի մեթոդական, կազմակերպական, նյութական վերազինման գործընթացը,

այդ թվում՝ 6 համակարգիչ և մեկ լայնաէկրան ժամանակակից հեռուստացույց, որն օժտված է ինտերակտիվ ուսուցում իրականացնելու հնարավորություններով:

- ✓ 2016 թ. սեպտեմբերին Համալսարանական շարունակական կրթության կենտրոնը տեղափոխվել է նոր տարածք:
- ✓ Պատրաստվել և գործարկման փուլ են մտել շարունակական կրթության երեք դասընթաց, որոնք կազմվելու են կենտրոնում իրականացվող ծրագրերի առանցքը՝ «Մարդկային ռեսուրսների կառավարումը բարձրագույն կրթության մեջ» բաց համալսարանական դասընթացը՝ կառուցված ժամանակակից SՏՏ-ների հենքով, «Դասավանդման էլեկտրոնային տեխնոլոգիաներ» մասնագիտական վերապատրաստման դասընթացը ԵՊԼՀ դասախոսական անձնակազմի համար, ապիրանտներին և հայցորդներին ուղղված՝ ատենախոսական հետազոտությունների իրականացման խնդիրներին վերբերող գործնական սեմինարը:
- ✓ Մշակվել, հաստատվել գիտական խորհրդի կողմից և գործարկվել է դասախոսների վերապատրաստման հնգամյա շրջափուլի ծրագիրը:

Ուսումնական գործընթացի վերլուծության արդյունքում վեր են 2016թ. բուհի թույլ և ուժեղ կողմերը, հնարավորություններն ու վտանգները.

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Ուսումնական պլանների ճկունություն և ադապտացում շուկայի պահանջներին: Ուսումնական ծրագրերի պարբերաբար վերանայում: Հեռակա ուսուցման ֆակուլտետի կրթական ծրագրերն իրենց հազեցվածությամբ չեն զիջում առկա ուսուցման ծրագրերին:	Ուսանողների թվաքանակի ոչ համամասնորեն բաշխում՝ ըստ մասնագիտությունների:
Տարբեր մասնագիտությունների և մասնագիտացումների համար յուրաքանչյուր առարկայի դասավանդման տարբերակված մոտեցում: Որպես արտալսարանային ուսուցման տարբերակ էլեկտրոնային տարբերակով հավելյալ ուսումնառժանդակ նյութերի տրամադրում:	Նույն խմբերում տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառելու գիտելիքների տարբեր մակարդակներ ունեցող ուսանողների առկայություն:
Ուսուցման արդիականացում, ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառում, որոնք նպաստում են ուսանողների ստեղծագործական և ինքնուրույն աշխատանք կատարելու հմտությունների զարգացմանը:	Ուսանողի ինքնուրույն աշխատելու և աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտությունների ցածր մակարդակ:
Մասնագիտական կրթաբլոկի առարկաների դասախոսություններն անցկացնելու նպատակով օտարերկրյա և հրավիրված մասնագետների առկայություն:	Հրավիրված և օտարերկրյա մասնագետների հայերենին կամ ռուսերենին չտիրապետելը որոշ դեպքերում խոչընդոտում է նյութի արագ և լիարժեք ընկալմանը:
Առարկայական նկարագրերի հնարավորինս համապատասխանեցում ուսանողների ընդհանուր ծանրաբեռնվածությանը և մասնագիտական հետաքրքրությունների շրջանակին:	Հայալեզու մասնագիտական գրականության սակավություն:
Դասավանդման մեթոդների և գնահատման չափանիշների պարբերական վերանայում:	
Կամընտրական առարկաների ընտրության մեխանիզմների կատարելագործում:	

Գիտելիքների ստուգման թեստային համակարգի կատարելագործում՝ ի նպաստ ուսանողների ելքային գիտելիքների բարելավմանն ու ամրապնդմանը:	
Բոլոր քննաշրջանները, ուսանողների գիտելիքների ընթացիկ ստուգումները, բուհի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումն անցկացվել են այդ գործընթացները կարգավորող իրավական ակտերի և բուհում գործող կանոնակարգերի և ընթացակարգերի համաձայն:	Ոչ պատշաճ մակարդակի պատրաստվածությամբ առաջին կուրսեցիների, քոլեջների շրջանավարտների առկայությունը նույն խմբում, ինչի արդյունքում առաջանում է տարբերակված և անհատականացված ուսուցման անհրաժեշտություն
Բոլոր քննաշրջաններին և ամփոփիչ ատեստավորմանը հաջորդել են համապատասխան վերլուծություններ, որոնց արդյունքում բուհի ստորաբաժանումներին տրվել են անհրաժեշտ հանձնարարականներ, ստուգվել և վերահսկվել է դրանց կատարման գործընթացը:	
Համագործակցություն տարբեր ուսումնական հաստատությունների հետ:	Համագործակցության շրջանակներում ստացված վերջնարդյունքների ոչ լիարժեք ներդրում:
Փարիզի «Սորբոն» և Ռուսաստանի Ժողովուրդների բարեկամության ցանցային համալսարանների հետ ստորագրվել են համագործակցության և միջկառավարական երկդիպլոմավորված մասնագետներ պատրաստելու վերաբերյալ ծրագրեր, որոնց արդյունքում ԵՊՀ մագիստրատուրայի ուսանողները հնարավորություն ունեն ստանալու 2 դիպլոմ: Հաշվետու ուսումնական տարում «Ֆրանսիական և համեմատական գրականություն» մասնագիտությամբ 2 մագիստրոս Սորբոնից հեռավար պաշտպանել են մագիստրոսական թեզերը:	Երկդիպլոմավորված մասնագետներ պատրաստելու վերաբերյալ ծրագրերը ԵՊՀ-ում առկա ոչ բոլոր մասնագիտություններին են վերաբերում: Երկու դիպլոմ ստանալու հնարավորությունը դեռևս չի գայթակղում ուսանողներին և սակավաթիվ ուսանողներ են ցանկություն հայտնում սովորել այդ մասնագիտությունները:

Հնարավորություններ	Վտանգներ
Ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման նպատակով հեռավար դասավանդման մեթոդաբանության մշակում:	Առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողության թվակազմի նվազում:
Այլ բուհերից մագիստրատուրա ընդունված ուսանողների համար լրացուցիչ լեզվական դասընթացների կազմակերպում՝ նրանց լեզվական գիտելիքները հնարավորինս համապատասխանեցնելով ԵՊԼՀ բակալավրիատի շրջանավարտների լեզվական մակարդակին: Ուսանողի ինքնուրույն, անհատական աշխատանքի կազմակերպման համապատասխան մեթոդաբանության դեպքում՝ կարելի է զարգացնել հետազոտական աշխատանք կատարելու հմտությունները:	Մասնագիտական ոչ ամբողջական կրթություն՝ հիմնված միայն գործնական առարկաների խորը ուսումնասիրության վրա:
Հետևողական կրթության պլանավորման պարագայում՝ տեսական և գործնական մասնագիտական առարկաներից ընդհանուր առաջադիմության մակարդակի բարձրացում, ինչն ուսանողներին կօգնի ավարտական ուստարվա ընթացքում հետազոտական աշխատանքներում /ավարտական աշխատանք/ և կկանխարգելի ավարտական քննությունների ընթացքում հնարավոր վտանգները:	Մասնագիտական գործնական առարկաներից ցուցաբերած ցածր առաջադիմությունը բացասաբար կարող է ազդել ուսանողների մասնագիտական որակավորման վրա:
Երկդիպլոմավորված մասնագետներ պատրաստող ծրագրերի բարելավում հետազայում նոր մասնագիտություններ ներդրմամբ ուսանողների թվակազմի ավելացում:	Նշյալ մասնագիտություններից սակավաթիվ ուսանողների առկայության դեպքում այդ ծրագրերի հետագա զարգացման պայմանների փոփոխության վտանգ:

2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

1963թ.-ից ԵՊԼՀ-ն իրականացնում է հետբուհական կրթություն, որը նպաստում է բարձրագույն որակավորման կադրերի պատրաստմանը /դոկտորանտներ, ասպիրանտներ, հայցորդներ/:

ԴՈԿՏՈՐԱՆՏՆԵՐԻ, ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ, ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

ԵՊԼՀ-ն իրականացնում է հետբուհական կրթություն 11 մասնագիտություններից առկա/հեռակա ասպիրանտների, հայցորդների և դոկտորանտների համար: 2016թ-ի դրությամբ բուհն ունի՝

- **2 դոկտորանտ,**
- **41 ասպիրանտ,** որից 5-ը՝ առկա ուսուցմամբ, 36-ը՝ հեռակա ուսուցմամբ: Բոլոր ասպիրանտները սովորում են կրեդիտային համակարգով,
- **88 հայցորդ,** ովքեր սովորում են կրեդիտային համակարգով:

Փարիզ IV Սորբոն համալսարանի հետ կնքած պայմանագրի շրջանակներում ԵՊԼՀ Համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի հայցորդներ Անի Սուլթանյանը շարունակում է ուսումը Փարիզ IV Սորբոն համալսարանում «Համեմատական գրականություն» մասնագիտությամբ:

Փարիզ IV Սորբոն համալսարանի հետ կնքած պայմանագրի շրջանակներում ԵՊԼՀ Համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի հեռակա ասպիրանտներ Լուսինե Աբգարյանը, Արփինե Հարությունյանը և Մարիամ Հովհաննիսյանը Փարիզ IV Սորբոն համալսարանի մագիստրատուրան ավարտելուց հետո աշխատում են թեկնածուական ատենախոսության վրա՝ ունենալով համատեղ գիտական ղեկավարներ /ԵՊԼՀ-ի և Փարիզ IV Սորբոն համալսարանի/:

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

ՀՀ ԲՈՀի 22.04.2015թ. հրամանի համաձայն ԵՊԼՀ-ն ունի՝

- 11 մասնագիտական առարկայական հանձնաժողով
 - Ժ.01.03 Ռուս գրականություն
 - Ժ.01.07 Արտասահմանյան գրականություն
 - Ժ.02.01 Հայոց լեզու
 - Ժ.02.02 Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն
 - Ժ.02.04 Սլավոնական լեզուներ
 - Ժ.02.07 Գերմանական լեզուներ /անգլերեն/

- o Ժ.02.07 Գերմանական լեզուներ /գերմաներեն/
- o Ժ.02.08 Ռոմանական լեզուներ /ֆրանսերեն/
- o ԺԳ.00.01 Մանկավարժության տեսություն և պատմություն
- o ԻԳ.00.02 Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ
- o ԻԳ.00.04 Միջազգային հարաբերություններ

ԵՊԼՀ-ի ռեկտորի 17.05.2016թ. 1Մ-98 հրամանի համաձայն ստեղծվել են որակավորման քննական հետևյալ հանձնաժողովները.

- o Օտար լեզու /անգլերեն/
- o Օտար լեզու /գերմաներեն/
- o Օտար լեզու /ֆրանսերեն/
- o Ինֆորմատիկա

ՔՆՆԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԵՊԼՀ-ում 2016թ.-ին զարնանային (28) և աշնանային (6) քննաշրջաններում թեկնածուական որակավորման քննություններ և ստուգարքներ են հանձնել 34 ասպիրանտ և հայցորդ:

Գարնանային քննաշրջանում 28 ասպիրանտից/հայցորդից գերազանց գնահատական են ստացել 12ը /42.85%/:

Աշնանային քննաշրջանում 8 ասպիրանտից/հայցորդից գերազանց գնահատական են ստացել 6-ը /75%/:

Թեկնածուական ատենախոսություն են պաշտպանել ԵՊԼՀ-ի 6 ասպիրանտ/հայցորդ.

- | | |
|-------------------------------------|--|
| 1. Մովսեսյան Լիլիթ Յուլյի | Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» /անգլերեն/ 10.02.2016թ. |
| 2. Հակոբջանյան Արմեն Հրաչիկի | Ժ.02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» 14.03.2016թ. |
| 3. Հակոբյան Սոնա Կարապետի | Ժ.02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» 05.09.2016թ. |
| 4. Ավետիսյան Բազրատ Եփրեմի | Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» 24.06.2016թ. |
| 5. Թանգյան Տաթևիկ Արմենի | Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» 02.12.2016թ. |

6. Հիլիյա Վյաչեսլավի Ասրյան

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն
պատմություն» 10.06.2016թ.

**Թեկնածուական ատենախոսության նախնական պաշտպանություն են անցել ԵՊՀ-ի 3
ասպիրանտ/հայցորդ.**

1. **Բարսեղյան Գայանե Անդրանիկի** - Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» /անգլերեն/
2. **Հակոբյան Նազելի Ռոբերտի** - Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» /անգլերեն/
3. **Խալաթյան Արփինե Գագիկի** - Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» /անգլերեն/

**2016թ. թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք են ստացել ԵՊՀ-ի
5 դասախոս.**

1. **Քրիստինե Գրիգորյան** - Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» /անգլերեն/
2. **Քրիստինե Սողկյան** - Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» /անգլերեն/
3. **Ֆրունզե Հովհաննիսյան** - Ժ.02.02 «Ընդհանուր և համեմատական
լեզվաբանություն»
4. **Սվետլանա Սամուելյան** - ԺԳ.00.02 «Դասավանդման և
դաստիարակության մեթոդիկա»
5. **Սոնյա Դավթյան** - Ժ.01.03. «Ռուս գրականություն»

2016թ. ԵՊՀ-ի դոկտորանտուրա է ընդունվել 1 դիմորդ Ժ.02.08 «Ռոմանական
լեզուներ» մասնագիտությամբ:

2016թ. ԵՊՀ-ի հետբուհական կրթության ընդունելության արդյունքներով առկա և
հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրա են ընդունվել 9 դիմորդ հետևյալ
մասնագիտություններով՝

1. ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» - 1 հեռակա
2. ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» - 1 հեռակա
3. Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» /անգլերեն/ - 2 առկա
4. Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» - 2 հեռակա
5. ԻԳ.00.04 «Միջազգային հարաբերություններ» - 1 հեռակա

ԵՊԼՀ-ՈՒՄ ԳՈՐԾՈՂ 059 «ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Երևանի Վ. Բյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում գործում է «Սլավոնական լեզուներ» 059 մասնագիտական խորհուրդը:

059 մասնագիտական խորհրդում դոկտորական և թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանվում՝ հետևյալ մասնագիտություններով.

➤ **ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ռուսաց լեզու)»** /մանկավարժական գիտություններ/ մասնագիտությամբ:

➤

Ժ.02.04 «Սլավոնական լեզուներ (ռուսաց լեզու)» /բանասիրական գիտություններ/ մասնագիտությամբ:

2016թ. 059 մասնագիտական խորհրդում Վանգ Հախժենը պաշտպանել է **«Հակադրական վերլուծությունը որպես լեզվաբանական հիմք չինացի ուսանողներին ուսաց լեզվի բայը ուսուցանելու գործընթացում»** թեմայով թեկնածուական ատենախոսությունը՝ ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ռուսաց լեզու)» մասնագիտությամբ:

ԵՊԼՀ-Ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՇՆՈՐՀՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐ

2016թ. ԵՊԼՀ գիտական խորհրդի կողմից շնորհվել է պրոֆեսորի երեք և դոցենտի ինը գիտական կոչում, որոնք հաստատվել են ՀՀ ԲՈՀ-ի կողմից.

➤ Հայագիտության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների դոկտոր **Գայանե Գերասիմի Գևորգյանին** շնորհվել է՝ պրոֆեսորի գիտական կոչում «Լեզվաբանություն» մասնագիտությամբ

➤ Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների դոկտոր **Նինա Իզորի Տատկալոյին** շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում «Մանկավարժություն» մասնագիտությամբ:

➤ Անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու **Հասմիկ Սարգսի Քաջբերունուն** շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում «Լեզվաբանություն» մասնագիտությամբ:


➤ Գերմաներենի ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու **Կարինե Մաքսիմի Հովհաննիսյանին** շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Լեզվաբանություն» մասնագիտությամբ:

- Գերմաներենի ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու **Գայանե Վազգենի Գինոյանին** շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Լեզվաբանություն» մասնագիտությամբ:
- Ռուսաց և սլավոնական լեզվաբանության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու **Էրիկա Ռոմիկի Ավակովային** շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Մանկավարժություն» մասնագիտությամբ:
- Հայագիտության ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու **Ռուզաննա Յուրիի Դոխոյանին** շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Լեզվաբանություն» մասնագիտությամբ:
- Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի ավագ դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու **Արկադի Ռոբերտի Պապոյանին** շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Մանկավարժություն» մասնագիտությամբ:
Հաշվի առնելով ՈԱԱԿ-ի նախաձեռնությունը, այն է՝ մշակել «Մասնագիտության կրթական ծրագրերի քլաստերային փորձաքննության անցկացման» կարգ՝ վերոնշյալ մագիստրոսական թեզը հիմք է հանդիսացել հիշյալ կարգի մշակման համար ևս: ԵՊԼՀ ՈԱԿ-ը հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է ՈԱԱԿ-ի կողմից «Մասնագիտության կրթական ծրագրերի քլաստերային փորձաքննության անցկացման» կարգի մշակման նպատակով կազմակերպված 6 հանդիպում-քննարկումների՝ ներկայացնելով ԵՊԼՀ-ի առաջարկություններն ու մոտեցումները կրթական ծրագրերի քլաստերային փորձաքննության անցկացման գործընթացի կազմակերպման և իրականացման վերաբերյալ:

✓ **15.02.2016թ.** ԵՊԼՀ ՈԱԿ-ի ներկայացուցիչներն ու ԵՊԼՀ ուսումնական գծով պրոռեկտորը մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից քլաստերային փորձաքննության կազմակերպման և իրականացման հարցերի քննարկման նպատակով կազմակերպված հանդիպմանը: Հանդիպման արդյունքները ներկայացվել են ԵՊԼՀ ղեկավարությանը՝ ԵՊԼՀ-ի կողմից առաջարկությունների փաթեթի մշակման համար: ԵՊԼՀ-ի կողմից մշակված առաջարկությունների փաթեթը և ԵՊԼՀ-ի կողմից

իրականացվող մասնագիտությունների նախնական խմբավորումների ցանկը ուղարկվել է ՈԱԱԿ-ի հաջորդ հանդիպմանը քննարկելու նպատակով:

- ✓ **17.03.2016թ.** ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված հանդիպման ընթացքում ԵՊԼՀ ՈԱԿ-ի ներկայացուցիչները հանդիպման մյուս մասնակիցների հետ միասին քննարկել են տարբեր բուհերի, ներառյալ ԵՊԼՀ-ի կողմից ներկայացված առաջարկությունները, դիտարկվել են յուրաքանչյուր բուհի կողմից իրականացվող կրթական ծրագրերի հնարավոր խմբավորումները:
- ✓ **20.04.2016թ.** հանդիպման ժամանակ ՈԱԱԿ-ը բուհերին ներկայացրել է քլաստերային աուդիտի գաղափարը, որը քննարկվել է հանդիպման մասնակից բուհերի ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը մասնակցել են նաև ԵՊԼՀ ՈԱԿ-ի ներկայացուցիչները և ԵՊԼՀ ուսումնական գծով պրոռեկտորը:
- ✓ **13.07.2016թ.** տեղի ունեցած հանդիպման ժամանակ բուհերի, այդ թվում նաև ԵՊԼՀ ներկայացուցիչները ՈԱԱԿ-ի անձնակազմի հետ միասին քննարկել են քլաստերային աուդիտի գործընթացի կազմակերպման և իրականացման նախնական ժամանակացույցը:
- ✓ **09.09.2016թ.** ՈԱԱԿ-ն ու բուհերի ներկայացուցիչները մշակել են առաջարկությունների փաթեթ և Մասնագիտության կրթական ծրագրերի քլաստերային փորձաքննության անցկացման կարգի նախագիծ ՀՀ Կրթության և Գիտության նախարարին ներկայացնելու նպատակով:
- ✓ **28.09.2016թ.** ԵՊԼՀ Որակի ապահովման կենտրոնի ղեկավարը, ՀՀ մյուս բուհերի ՈԱԱԿ-ի և ներկայացուցիչների հետ միասին մասնակցել է ՀՀ ԿԳ նախարարի հետ հանդիպու-քննարկմանը Մասնագիտության կրթական ծրագրերի քլաստերային փորձաքննության անցկացման կարգի նախագծի քննարկման նպատակով:

2. ԵՊԼՀ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆՆ ՌԻՂԴՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԵՊԼՀ ՈԱԿ-ը, կարևորելով բուհի գործունեության շարունակական բարելավմանն ուղղված աշխատանքների պլանավորումն ու իրականացումը, աշխատանքներ է իրականացնում ԵՊԼՀ կատարողականի պարբերաբար գնահատման ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում հատկանշական են ԵՊԼՀ-ի կատարողականի գնահատմանն ուղղված հետևյալ աշխատանքների իրականացումը՝

- **ԵՊԼՀ գործունեության համապարփակ SWOT վերլուծություն**
- **ԵՊԼՀ ռիսկերի գնահատում**
- **ԵՊԼՀ ամբիոնների ինքնավերլուծության ձևաչափի մշակում**

Այս նպատակից ելնելով՝ 2016թ. մարտին ԵՊԼՀ ՈԱԿ-ն իրականացրել է **ԵՊԼՀ գործունեության համապարփակ SWOT վերլուծություն՝** համաձայն Գերմանիայում միջազգային հավատարմագրման կազմակերպության (ASIIN) կողմից տրամադրված ձևաչափի: SWOT վերլուծությունը ներկայացվել է ՈԱԿ-ի փորձագետների և Տեմպուս GOVERN ծրագրում ներգրավված միջազգային փորձագետների քննարկմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊԼՀ ՈԱԿ-ը մշակել է **ԵՊԼՀ ռիսկերի գնահատման տեղեկագիրը**, որը քննարկվել և համաձայնեցվել է ԵՊԼՀ ռեկտորի և ԵՊԼՀ ուսումնական գծով պրոռեկտորի հետ: ՀՀ ԿԳՆ աշխատակազմի ներքին աուդիտի վարչության 2017-2019թթ. ռազմավարական ծրագրի մշակման և ռիսկերի գնահատման գործընթացի կազմակերպման նպատակով ԵՊԼՀ ռիսկերի տեղեկագիրը 07.11.2016թ.-ին ներկայացվել է ՀՀ ԿԳՆ:

Տեղեկագրում ներկայացվել են ԵՊԼՀ հավանական ռիսկերը, դրանց նկարագրությունն ու ռիսկերի ազդեցության գնահատականը: Հավանական ռիսկերը ներկայացվել են հետևյալ ուղղություններով՝



ԵՊԼՀ ՈԱԿ-ը, կարևորելով բուհում հաշվետվողականության արդյունավետ մեխանիզմների մշակման և կիրառման անհրաժեշտությունը, մշակել է ԵՊԼՀ **ամբիոնների ինքնավերլուծության ձևաչափ**, որը բազմաբովանդակ տեղեկատվություն և վերլուծություն է պահանջում ամբիոնների 2011-2016թթ. իրականացրած գործունեության վերաբերյալ: Ձևաչափը մշակվել է Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի օրինակով և ս.թ. հոկտեմբերի 25-ին ներկայացվել է ԵՊԼՀ Գիտական խորհրդի նիստին և արժանացել հավանության: Հաստատված ձևաչափով ինքնավերլուծություն են իրականացնելու ԵՊԼՀ բոլոր ամբիոններն ու գիտաուսումնական կենտրոնները, որոնք իրենց հերթին հիմք կհանդիսանան ԵՊԼՀ հաջորդ ինստիտուցիոնալ ինքնավերլուծության գործընթացի կազմակերպման համար:

3. ՏԵՄՊՈՒՄ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՊԼՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊԼՀ ՈԱԿ-ի անձնակազմը, մասնակցելով Տեմպուսի ծրագրերի աշխատանքներին, իրականացրել է ԵՊԼՀ գործունեության բարելավմանն ուղղված մի շարք աշխատանքներ ծրագրերի շրջանակներում իրականացվող ուսումնասիրությունների, հետազոտությունների և մշակումների միջոցով, մասնավորապես՝

➤ ՏԵՄՊՈՒՍ GOVERN



- ✓ **2016թ. մարտ-** ԵՊԼՀ ՈԱԿ-ն իրականացրել է ԵՊԼՀ գործունեության համապարփակ SWOT վերլուծություն, որը ներկայացվել է ՈԱԿ և Տեմպուս GOVERN ծրագրում ներգրավված միջազգային փորձագետների քննարկմանը:
- ✓ **2016թ. հոկտեմբեր-** ԵՊԼՀ ՈԱԿ-ը, համակարգելով Տեմպուս GOVERN ԵՊԼՀ աշխատանքային խումբը, Գերմանիայում միջազգային հավատարմագրման կազմակերպության (ASIIN) ձևաչափի հիման վրա իրականացրել և Տեմպուս GOVERN ծրագրի ղեկավար թիմին է ներկայացրել ԵՊԼՀ գործունեության ինքնավերլուծություն հետևյալ երեք չափանիշների ուղղությամբ՝
 - ռազմավարական պլանավորում
 - մարդկային ռեսուրսների կառավարում
 - որակի կառավարում
- ✓ **2016թ. փետրվար-հուլիս-** ԵՊԼՀ ՈԱԿ-ի անձնակազմը մասնակցել է Տեմպուս GOVERN ծրագրի ղեկավար խմբի կողմից պարբերաբար կազմակերպված հանդիպումներին ծրագրում ներգրավված բուհերում ռեգիստրարի ներդրմանն առնչվող հարցերի քննարկման և առաջարկությունների ներկայացման նպատակով: ԵՊԼՀ-ն ներկայացրել է առաջարկությունների փաթեթ՝ ուղղված բուհում ռեգիստրարի արդյունավետ գործարկմանը:
- ✓ **2016թ. հոկտեմբեր-նոյեմբեր-** ԵՊԼՀ ՈԱԿ-ը համակարգել է Տեմպուս GOVERN ծրագրի շրջանակներում Ագրարային համալսարանի կողմից ԵՊԼՀ-ում

իրականացված սեմինար-հանդիպումները ռեգիստրարի ներդրման և գործարկման ուղղությամբ:

➤ ՏԵՄՊՈՒՍ ALIGN



- ✓ **2016թ. մայիս-սեպտեմբեր-** հանդիսանալով Տեմպուս ALIGN ԵՊԼՀ աշխատանքային խմբի անդամ՝ ՈԱԿ-ի անձնակազմը «Հանրային կառավարում» կրթական ծրագրի ներկայացուցիչների հետ միասին մշակել և Տեմպուս ALIGN ծրագրի միջազգային փորձագետների ու ՈԱԿ-ի տեղացի փորձագետների արտաքին գնահատմանն է ներկայացրել է հետևյալ անհրաժեշտ փաստաթղթային փաթեթ, որը ներառում է՝

- *Կրթական ծրագրի համապարփակ ինքնավերլուծություն*
- *Կրթական ծրագրի ամբողջական փաթեթ* (կրթական ծրագրի նկարագրություն, ուսումնական պլան, ծրագրի ժամանակացույց, դասընթացներ համապատասխան կրթական վերջնարդյունքներով և հատկացվող կրեդիտներով, ծրագրի կրթական վերջնարդյունքների և կրթական ծրագրի վերջնարդյունքների քարտեզագրում և այլն)

- ✓ **2016թ. նոյեմբեր** - ԵՊԼՀ ՈԱԿ-ի անձնակազմը մասնակցել է փորձագիտական այցով ԵՊԼՀ ժամանած ծրագրի միջազգային և տեղացի փորձագետների հետ հանդիպմանը՝ ներկայացնելով ԵՊԼՀ-ում որակի ապահովմանն ուղղված աշխատանքների իրականացման մեխանիզմներն ու արձանագրված ձեռքբերումները:

➤ ՏԵՄՊՈՒՍ
VERITAS



- ✓ Տեմպուս VERITAS ծրագրում ներգրավված ԵՊԼՀ աշխատանքային խմբի անդամներն ու ԵՊԼՀ ՈԱԿ-ի ղեկավարը համատեղ մշակել են **ԵՊԼՀ ճանապարհային քարտեզը (road map)**՝ ներառելով ինստիտուցիոնալ մակարդակում հետբուհական կրթության կազմակերպման և իրականացման հիմնական նախադրյալները և որակի ապահովման մեխանիզմների կիրառման կարևորությունը: Մշակված

փաստաթուղթը մեթոդաբանական մոտեցում է ներկայացնում Զալցբուրգյան սկզբունքներին համապատասխան հետբուհական կրթության իրականացման համար: Փաստաթուղթը ներկայացվել է Տեմպուս VERITAS ծրագրում ներգրավված միջազգային և ՈԱԱԿ փորձագետների քննարկմանը և նրանց կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա կատարվել են համապատասխան հավելումներ և լրացումներ:

- ✓ Տեմպուս VERITAS ծրագրի շրջանակներում իրականացվել է ԵՊԼՀ-ում հետբուհական կրթության կազմակերպման և իրականացման վերաբերյալ **SWOT վերլուծության**, որը օգնել է ԵՊԼՀ-ին վեր հանել կրթության տվյալ մակարդակում առաջարկվող կրթական ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև ներկայացնել հնարավորություններն ու վտանգները:

4. ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ԵՊԼՀ ՈԱԿ-ն իր գործառույթների շրջանակներում ձեռնամուխ է եղել նաև որակի ապահովման ոլորտում **գլխահետազոտական աշխատանքների** կատարմանը՝

- **Բենչմարքինգի իրականացմանն ուղղված աշխատանքների պլանավորում և մեթոդաբանության մշակում,**
- **PEST վերլուծության իրականացման մեթոդաբանության մշակում:**

ԵՊԼՀ ՈԱԿ-ը հաշվետու ժամանակահատվածում մեկնարկել է **բենչմարքինգ** ՀՀ և արտասահմանյան բուհերի որակի ապահովման քաղաքականության լավագույն փորձը երկու ուղղություններով վերհանելու նպատակով: Այդ երկու ուղղություններն են՝

- ✓ որակի ներքին ապահովման կիրառվող մեխանիզմներ,
- ✓ որակի ապահովման համակարգերի բենչմարքինգի իրականացման համար մեթոդաբանության արդյունավետ ցուցանիշներ:

Իրականացվող բենչմարքինգը հիմք է ծառայելու ԵՊԼՀ-ում ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում ֆորմալ բենչմարքինգի իրականացման համար համապատասխան միասնական քաղաքականության մշակման համար: Միասնական քաղաքականությունը ներկայումս գտնվում է մշակման փուլում:

ԵՊԼՀ կատարողականի համապարփակ գնահատման համար ՈԱԿ-ը մշակել է **PEST վերլուծության իրականացման մեթոդաբանությունը**: PEST վերլուծության շնորհիվ բուհը հնարավորություն է ստանում խորապես և բազմակողմանիորեն վերլուծելու *քաղաքական, տնտեսական, սոցիալական և տեխնոլոգիական* զարգացումներն ու դրանց հնարավոր ազդեցությունները կազմակերպության գործունեության վրա: Բուհի արտաքին միջավայրի վերլուծության ենթագործոններից են օրինակ փոփոխություններ ազգային և միջազգային օրենսդրական դաշտերում, գրագիտության և կրթության ցուցանիշներ, առկա և ներդրվող տեխնոլոգիաների ցուցանիշներ և այլն: PEST վերլուծությունը կարելի է կիրառելի բուհի ռազմավարական պլանավորման գործընթացում, որը կարող է էապես բարձրացնել այդ գործընթացի արդյունավետությունը:

5. ՈԱԿ-Ի ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ

2016թ. ՈԱԿ-ի աշխատակիցները մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաների զարգացման նպատակով՝ մասնակցել են տեղական ու միջազգային հետևյալ գիտաժողովներին, համաժողովներին, սեմինարներին և աշխատաժողովներին՝

5.1. Մասնագիտական զարգացում միջազգային մակարդակում /5/

- ***Քաղաքականության վերլուծություն***
 - հունվար-հունիս, 2016թ., ԱՄՆ, Բոստոն- «Հանրային քաղաքականություն և հանրային կառավարում» ծրագրի շրջանակներում վերապատրաստման դասընթաց Ֆլեթչերի անվան իրավաբանության և դիվանագիտության դպրոցում ***/Ռոբերտ Խաչատրյան/***
 - փետրվար 18-20, 2016թ. Լեհաստան, Պոզնան - համակարգման հանդիպում TEMPUS ALIGN ծրագրի շրջանակներում փորձագիտական այցերին նախապատրաստվելու նպատակով ***/Անի Մազմանյան/***
- ***Տեղեկատվական գրագիտություն***
 - մարտի 8-9, 2016թ. Ռումինիա, Բրաշով - «Գրադարանային ցանցի աջակցման ծառայություններ. Հայաստանի, Մոլդովայի և Բելառուսի գրադարանների

արդիականացում գրադարանի աշխատակազմի մասնագիտական զարգացման և գրադարանների բարեփոխման միջոցով» ERASMUS+ ծրագրի մեկնարկային հանդիպում/ *Անի Շահինյան*/

- ***Ղասափանդման և հետազոտության իրականացման մեթոդներ***

- սեպտեմբերի 16-21, 2016թ. Չեխիա, Պրահա- Միջազգային ակադեմիական գիտաժողով հետազոտության քանակական մեթոդների վերաբերյալ՝ կազմակերպված Հասարակական և տնտեսական գիտությունների ինստիտուտի կողմից /*Ռոբերտ Խաչատրյան*/
- հոկտեմբերի 11-15, 2016թ. ՌԴ, Մոսկվա- «Педагогическое начало» խորագրով համաժողով կազմակերպված Մանկավարժական բուհերի Եվրասիական ասոցիացիայի կողմից /*Ռոբերտ Խաչատրյան*/

5.2. Մասնագիտական զարգացում ազգային մակարդակում /5/

- ***Մարդկային ռեսուրսների կառավարում***

- հունվար-փետրվար, 2016թ. «Մարդկային ռեսուրսների կառավարում» վերապատրաստման դասընթացներ ՏԵՄՊՈՒՍ SSRULLI ծրագրի շրջանակում, ԵՊԼՀ /*Ռոբերտ Խաչատրյան, Անի Շահինյան, Անի Մազմանյան*/
- հոկտեմբերի 26, 2016թ. «Կրթական կազմակերպությունների խթանումը մարդկային ռեսուրսների միջոցով» միջազգային համաժողով Հայաստանի Ամերիկյան համալսարանում /*Ռոբերտ Խաչատրյան, Անի Մազմանյան*/

- ***Որակի ապահովում և կրթության կայուն զարգացում***

- փետրվարի 18-19, 2016թ. «Ակնկալվող կրթական վերջնարդյունքների համապատասխանեցումը դասավանդման/ուսումնառության և գնահատման ձևերին» աշխատաժողով Էրազմուս+ ծրագրի շրջանակներում, ԵՊԼՀ /*Անի Շահինյան*/
- հոկտեմբերի 18, 2016թ. «Որակի ապահովման աջակիցների ցանցի ձևավորում» թեմայով հանդիպում-քննարկում կազմակերպված ՈԱԱԿ-ի կողմից /*Ռոբերտ Խաչատրյան, Անի Շահինյան, Անի Մազմանյան*/

- նոյեմբերի 18, 2016թ. «Միգրացիան և զարգացումը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների համատեքստում» աշխատաժողով կազմակերպված Միգրացիայի միջազգային կազմակերպության և ՀՀ ազգային վիճակագրության ծառայության կողմից /*Ռոբերտ Խաչատրյան*/
- **Մտավոր սեփականություն**
 - մայիսի 11, 2016թ. Հեղինակների գույքային իրավունքների կոլեկտիվ կառավարմանն առնչվող հանդիպում-քննարկում կազմակերպված ԱՄՆ Առևտրի դեպարտամենտի կոմերցիոն իրավունքի զարգացման ծրագրի (CLDP) շրջանակներում/*Անի Շահինյան*/
 - նոյեմբերի 29, 2016թ. «Հեղինակային և հարակից իրավունքներ» թեմայով միջազգային գիտաժողով ԵՊԼՀ-ում /*Անի Շահինյան*/

6. ԵՊԼՀ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Կարևորելով ԵՊԼՀ-ում որակի մշակույթի տարածմանն ուղղված աշխատանքների անհրաժեշտությունը՝ ՈԱԿ-ը հաշվետու ժամանակահատվածում կազմակերպել և իրականացրել է վերապատրաստման դասընթացներ՝ ուղղված ԵՊԼՀ վարչական, և պրոֆեսորադասախոսական կազմերի իրազեկման բարձրացմանը:

- ✓ *«Մարդկային ռեսուրսների կառավարումը բուհերում» թեմայով վերապատրաստման դասընթացներ ԵՊԼՀ վարչական կազմի ներկայացուցիչների համար /14.01.2016թ. 12 մասնակից/:* Վերապատրաստումների ընթացքում ներկայացվել են մարդկային ռեսուրսների համալրման, աշխատուժի պլանավորման, ՊԴ և ուսումնառության կազմերի կատարողականի գնահատման, աշխատանքային հարաբերությունների կարգավորման, ՊԴ կազմի խրախուսման, վերապատրաստման և մասնագիտական զարգացման և հարակից այլ թեմաների մասին անհրաժեշտ տեղեկատվություն:
- ✓ *«SWOT վերլուծության գործիքի արդյունավետ կիրառում» թեմայով վերապատրաստման դասընթացների կազմակերպում և իրականացում ԵՊԼՀ վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսումնառության կազմերի ներկայացուցիչների համար /15.01.2016թ., 15 մասնակից/:* Վերապատրաստման այս

դասընթացը կազմակերպվել է՝ ելնելով ԵՊԼՀ կարիքներից, քանի որ յուրաքանչյուր ստորաբաժանում հաշվետվություն ներկայացնելիս և ինքնավերլուծություն իրականացնելիս պարտադիր պետք է իրականացնի նաև SWOT վերլուծություն:

7. ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հանդիսանալով ԵՊԼՀ-ում որակի մշակույթի ձևավորման, ամրապնդման և տարածման առանցքային օղակ՝ ԵՊԼՀ ՈԱԿ-ը շարունակաբար համագործակցում է ԵՊԼՀ կառուցվածքային ստորաբաժանումների հետ՝ ելնելով ԵՊԼՀ կրթական ծառայությունների և կրթության որակի բարելավման անհրաժեշտությունից:

ԵՊԼՀ ՈԱԿ-ը Կարիերայի կենտրոնի հետ համատեղ իրականացրել է երկու մեծածավալ հարցումներ գործատուների և շրջանավարտների շրջանում՝

- ✓ **հարցում ԵՊԼՀ 2010-2015թթ. շրջանավարտների շրջանում**, որի նպատակն էր գնահատել ԵՊԼՀ շրջանավարտների բավարարվածությունը ԵՊԼՀ-ում ստացած իրենց կրթությունից և ԵՊԼՀ կրթական միջավայրից, ինչպես նաև տեղեկատվություն հավաքագրել ԵՊԼՀ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ,
- ✓ **հարցում ԵՊԼՀ գործատուների շրջանում**, որի նպատակն էր պարզել, թե արդյոք գործատուները լիովին պատկերացնում են, թե ինչ կրթություն է տրամադրում ԵՊԼՀ-ն և ինչ մասնագիտական կարողություններով ու հմտություններով են օժտված ԵՊԼՀ ուսանողներն ու շրջանավարտները:

Հարցումներն անցկացվել են SurveyMonkey էլեկտրոնային գործիքի միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում ՈԱԿ-ի կողմից վերլուծվել են հարցումների արդյունքները, որոնք 2017թ. փետրվար-մարտ ամիսներին ներկայացվելու են ԵՊԼՀ ներքին և արտաքին շահակիցներին և ԵՊԼՀ Գիտական խորհրդին:

- ✓ **կլոր-սեղան քննարկում** «Հանրային կառավարում» կրթական ծրագրի արտաքին շահակիցների /գործատուների/ հետ, որի նպատակն էր ստանալ գործատուների արձագանքը տվյալ կրթական ծրագրի կազմակերպման և իրականացման վերաբերյալ և հավաքագրել նրանց առաջարկությունները կրթական ծրագրի բարելավման և շարունակական որակի ապահովման վերաբերյալ:

8. ՈԱԿ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կարևորելով ԵՊԼՀ-ի դերի բարձրացումն ազգային և միջազգային մակարդակներում, արտաքին շահակիցների շրջանում ԵՊԼՀ-ի հանդեպ վստահության ամրապնդումն ու արտաքին արդյունավետ համագործակցությունների խթանումը՝ ԵՊԼՀ ՈԱԿ-ը շարունակաբար համագործակցում է տարբեր կազմակերպությունների հետ: 2016թ. արդյունավետ համագործակցության ձևաչափերից կարելի է մասնավորապես նշել հետևյալները՝

- **ՀՀ Կրթության և գիտության նախարարության** հետ համագործակցության արդյունքում ՀՀ ԿԳ նախարարի հրամանով կազմվել է աշխատանքային խումբ, որի անդամ է նաև ԵՊԼՀ ՈԱԿ-ի ղեկավարը: Աշխատանքային խմբի ստեղծման նպատակն է մշակել բարձրագույն կրթության ոլորտի զարգացմանը միտված երկարաժամկետ ծրագիր: ԵՊԼՀ ՈԱԿ-ի ղեկավարի կողմից ՀՀ ԿԳՆ աշխատանքային խմբի քննարկմանն է ներկայացվել ՀՀ-ում հետազոտական համալսարանների ստեղծման նախագիծը:
- **Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի /ՈԱԱԿ/** հետ համագործակցությունը 2016թ.-ի ընթացքում արձանագրել է հետևյալ արդյունքները՝
 - ✓ ԵՊԼՀ ՈԱԿ-ի անձնակազմը մասնակցել է ՈԱԱԿ-ի ինքնավերլուծական զեկույցի քննարկմանը և շահակիցների կողմից կարծիքների հավաքագրմանը: ԵՊԼՀ ՈԱԿ-ը ևս հանդիսանալով ՈԱԱԿ-ի շահակից՝ ներկայացրել է իր մեկնաբանություններն ու առաջարկությունները ՈԱԱԿ-ի ինքնավերլուծական զեկույցի վերաբերյալ:
 - ✓ ԵՊԼՀ ՈԱԿ-ը մասնակցել է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիային (ENQA) ՈԱԱԿ-ի անդամակցության շրջանակներում փորձագիտական խմբի նախնական այցի ընթացքում բուհերի ներկայացուցիչների հետ տեղի ունեցած հանդիպմանը:
 - ✓ ԵՊԼՀ ՈԱԿ-ի անձնակազմը և ՊԴ կազմի ներկայացուցիչների հաշվետու ժամանակահատվածում մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված բազմաթիվ հանդիպումներին և սեմինարներին, որի արդյունքում նրանցից ոմանք ընդգրկվել են ՈԱԱԿ-ի փորձագետների բազայում:

- **ՄԱԿ-ի Երևանյան գրասենյակի և ԵՊԼՀ Կարիերայի կենտրոնի** հետ համագործակցության արդյունքում 2016թ. հոկտեմբերի 14-ին ԵՊԼՀ-ում կազմակերպվել է համաժողով «Կայուն զարգացման կրթության մոդելի գործարկումը ՀՀ-ում ի նպաստ մրցունակ և որակյալ կրթության» թեմայով, որի ընթացքում ԵՊԼՀ ՈԱԿ-ը անձնակազմը հանդես է եկել «Որակյալ կրթությունը որպես կայուն զարգացման հիմք» թեմայով ներկայացմամբ:
- **ՄԱԿ-ի Երևանյան գրասենյակի և Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի հետ** համագործակցության արդյունքում 2016թ. հոկտեմբերի 31-ին ԵՊԼՀ ՈԱԿ-ը անձնակազմը ելույթով հանդես է եկել «Կրթությունը հանուն կայուն զարգացման համաշխարհային գործընթացը և Հայաստանը» թեմայով աշխատաժողովի ընթացքում:
- **ՀՀ Կրթության և գիտության նախարարության և ԵՊԼՀ ղեկավարության հետ** համագործակցության շրջանակներում ԵՊԼՀ ՈԱԿ-ը մասնակցել է բուհերի վարկանշավորման համար իրականացվող հարցմանը՝ տրամադրելով տեղեկատվություն բուհի հավատարմագրման, բուհում որակի ապահովման համակարգի կիրառման վերաբերյալ:
- **Երևանի պետական համալսարանի հետ** համագործակցության շրջանակներում ԵՊԼՀ ՈԱԿ-ը մասնակցել է բարձրագույն մասնագիտական կրթության որակի ամփոփ ցուցանիշի գնահատման մոդելի մշակման աշխատանքների նպատակով իրականացված հարցմանը՝ ներկայացնելով բարձրագույն կրթության որակի ապահովմանն առնչվող հիմնադրույթներն ու կրթության որակի վրա ազդող հիմնական գործոնները:

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

2016թ.-ին ԵՊԼՀ-ում անցկացվեցվել են մի շարք նշանակալի միջոցառումներ ԵՊԼՀ տարբեր ստորաբաժանումների կողմից, որոնք ներկայացվում են ստորև:

Գերմաներենի ամբիոն

Ապրիլի 13-15-ը Մոսկվայում կայացել է **«Ցածր երկրների մշակութային առանձնահատկությունները»** խորագրով ուսանողական կոնֆերանսը, որին ներկա հյուրերի թվում են եղել ԵՊԼՀ գերմաներենի ամբիոնի, Հոլանդական լեզվի միության և Արևելյան-Եվրոպական երկրների հոլանդական միության ներկայացուցիչներ:

Ապրիլի 28-ին տեղի է ունեցել **Պարույր Սևակի բանաստեղծությունների գերմաներեն թարգմանություններին** նվիրված միջոցառում Հ.Թումանյանի անվան թանգարանում, որին ներկա են եղել ԴԱԱԴ-ի գրասենյակի ներկայացուցիչներ ու Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից ժամանած հյուրեր:

Մայիսի 3-5-ը ԵՊԼՀ-ում Հալլե-Վիտտենբերգ համալսարանի պրոֆեսորներ պարոն Զոլմսը և պարոն Նելին հանդես են եկել **«Օտար բառերը գերմաներեն լեզվում»** և **«Արտագաղթի թեմաներով գրականության պատմություն»** զեկույցներով:

Մայիսի 6-ին կայացել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության աշակերտների փոխանակման ծրագրի շրջանակներում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի պատգամավոր Ալբերտ Վայլերի և Հայաստանում Գերմանիայի Դաշնության Հանրապետության դեսպան պարոն Քիսլերի այցը ԵՊԼՀ:

Մայիսի 20-ին ԵՊԼՀ-ում տեղի է ունեցել Համբուրգի համալսարանի (Asien-Afrika-Institut der Universität Hamburg) պրոֆեսոր պարոն Պաուլ Լյուդվիգի զեկույցը **«Մշակութային և լեզվական առնչությունները, հարաբերությունները Հայաստանի և Իրանի միջև»** թեմայով, որին ներկա է գտնվել նաև ԴԱԱԴ-ի գրասենյակի ներկայացուցիչներ:

Մայիս ամսին Ավստրիայի կրթության դաշնային նախարարության կողմից կազմակերպվել է **«Ավստրիական օրեր Երևանում»** միջոցառումների շարքը, որին ներկա են գտնվել ԵՊԼՀ գերմաներենի ամբիոնն ու ավստրիական գրադարանի

ներկայացուցիչներ, Հայաստանում Ավստրիայի դեսպանը, Ավստրիայի կրթության և մշակույթի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Նորբերդ Հաբերը, Ավստրիայի արտգործնախարարության գլխավոր քարտուղար Միխայել Լինհարթը:

Մայիսի 21-22-ին ԵՊԼՀ ավստրիական գրադարանում Նորբերդ Հաբերն ու Անդրեաս Կուրցը հանդես են եկել **«Ճանաչում ես Ավստրիան»** և **«Ավստրիական պատմություն»** խորագրով զեկույցներով, որին ներկա է գտնվել նաև Ավստրիայի արտգործնախարարության գլխավոր քարտուղար Միխայել Լինհարթը:

Մայիսի 26-29-ին ԵՊԼՀ-ում Վիենայի սոցոլոգիայի համալսարանի պրոֆ. Ֆրանց Կոլանդը ուսանողների և դասախոսների համար հանդես է եկել դասախոսությամբ **«Մեծահասակների կրթությունը»** թեմայով: Դասախոսությանը ներկա են գտնվել հայաստանյան գրասենյակի ԴԱԱԴ-ի ղեկավար Սիլվիա Շմիդը և Վրաստանի Թբիլիսիի համալսարանի, Երևանի մանկավարժական և պետ. համալսարանների գերմաներենի դասախոսներ:

Օգոստոսի 15-ից սեպտեմբերի 5-ը ԵՊԼՀ-ում իրականացվել է **Միջազգային ամառային դպրոց**, որին մասնակցել են Գերմանիայի Դաշնությունից ժամանած ուսանողներ և դասախոսներ:

Սեպտեմբերի 15-ին ԵՊԼՀ-ում կազմակերպվել է զեկույց ավստրիացի գրականագետ պրոֆեսոր Աննա Վայդենհոլցերի կողմից:

Սեպտեմբերի 30-ին ԵՊԼՀ գերմաներենի ամբիոնը կազմակերպել է Բարբարա Դենշերի զեկույցը **«Կանայք ոսկու մեջ: Գուստավ Կլիմթի կյանքն ու ստեղծագործությունը»** թեմայով, որը տեղի է ունեցել Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանում:

Հոկտեմբերի 2-8-ը ԵՊԼՀ-ում կայացել է **«Միջմշակութայնությունը տեսականում և գործնականում»** սեմինարը, որին մասնակցել են Հայաստանում ԴԱԱԴ-ի գրասենյակ ներկայացուցիչներ, մանկավարժական և պետական համալսարանների գերմաներենի դասախոսներ, ՀՀ տարբեր մարզերի մանկավարժներ, Վրաստանից ժամանած 10 դասախոսներ և ուսանողներ:

Հոկտեմբերի 15-ին ԵՊԼՀ-ում կազմակերպվել է զեկույց ավստրիացի գրականագետ պրոֆեսոր Կլաուս Ցայրինգերի կողմից:

Հոկտեմբեր ամսին կազմակերպվել են համատեղ սեմինար, ճանաչողական էքսկուրսիաներ և արշավներ, որոնց մասնակցել են Մանհայմի Ֆոյդենհայմ գիմնազիայի աշակերտները՝ Գերհարդ Իգրայելի ղեկավարությամբ:

Համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոն

Ապրիլի 11-12-ին ԵՊԼՀ-ում կայացել է «Ֆրանկաֆոնիայի օրեր» միջոցառումների շարքը, որին ներկա է գտնվել Ժոզե Պլիան Գվադելուպայից:

Հոկտեմբերի 6-8-ին ԵՊԼՀ-ի Բյուստովագիտության կենտրոնի հետ համատեղ կազմակերպել է «Բյուստովյան ընթերցումներ» միջազգային գիտաժողովը, որին ներկա էին ՀՀ Կրթության և գիտության նախարարության, Մշակույթի նախարարության, Հայաստանում Ռուսաստանի դեսպանատան, Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի, Ռուսաստանի հայերի միության (ՌՀՄ) ներկայացուցիչներ: Գիտաժողովի ընթացքում ցուցադրվեց «Ինչպես ընկերացան հայ և ռուս դասականները» վավերագրական ֆիլմը:

Հոկտեմբերի 20-21-ին տեղի է ունեցել «Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ» խորագրով միջազգային գիտաժողովը, որին ներկա էին հյուրեր Նիժնի Նովոռոդից և Թբիլիսիից:

Նոյեմբերի 3-5-ը կայացել է «Ֆրանսիական գրականության օրեր» միջոցառումների շարքը, որին ներկա էին նաև Ֆրանսիայից ժամանած հյուրեր:

Ֆրանսերենի ամբիոն

Մարտի 24-25-ին Ֆրանկոֆոնիայի շաբաթվա շրջանակներում կազմակերպվել է «Աշխարհի լեզվական պատկերը» 8-րդ միջազգային գիտաժողովը, որին ներկա են գտնվել AUF-ի անդամ գործընկեր-համալսարանի դասախոսներ Հայաստանից և արտասահմանից:

Հոկտեմբերի 12-ին տեղի է ունեցել կլոր սեղան քննարկում «Ֆրանսահայ համայնքի արդի խնդիրները» թեմայով, որը վարել է ճարտարապետ, ֆրանսահայ քաղաքական գործիչ Վահե Մուրադյանը:

Հոկտեմբերի 17-ին կայացել է դասախոսություն **«Ֆրանս-հայկական հարաբերությունների արդի հիմնախնդիրները»** թեմայով, որը վարել է Հայաստանում Ֆրանսիայի նախկին դեսպան Անրի Կյունին:

Հոկտեմբերի 24-ին տեղի է ունեցել **հաշվետվություն և ապագա ծրագրերի հանդիպում-քննարկում** ԵՊԼՀ Ֆրանսերենի ամբիոնի դասախոսների, Ակադեմիական նվաճումների կենտրոնի համակարգողների և Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի նորանշանակ տնօրեն Մոհամեդ Կետատայի հետ:

Նոյեմբերի 3-5-ը ԵՊԼՀ-ում կայացել է **«Ֆրանսիական գրականության օրեր. Սամուել Բեկետ»** միջոցառումների շարքը, որին մասնակցել են Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Ժան-Ֆրանսու Շարպանտիեն և դեսպանության մշակութային համագործակցության հարցերով կցորդը, ինչպես նաև Ֆրանսիայից ժամանած Փարիզ-Սորբոն 4 համալսարանի դասախոսներ՝ Բեռնար Ֆրանկոն, Շվալիեն և Ժ.Վիոն Դյուրին:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոն

Հոկտեմբերի 28-29-ին կայացել է միջազգային կոնֆերանս **«Հետխորհրդային տրանսֆորմացիան քառորդ դար անց. արդյունքներ և հեռանկարներ»** խորագրով, որին մասնակցել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի մի շարք դասախոսներ, ինչպես նաև հայտնի մասնագետներ Գերմանիայից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Վրաստանից:

Եվրոպական և ասիական լեզուների ամբիոն

Իտալերեն լեզվի միջոցառումներ

Հոկտեմբերի 17-23-ը ԵՊԼՀ-ում կայացել է **«Իտալերեն լեզվի օրեր»**-ին նվիրված միջոցառումների շարքը, որի ժամանակ իտալերեն լեզվի բաժնի և ռոմանական լեզուների ամբիոնի դասախոսներ Գրիգոր Ղազարյանը, Զարուհի Ոսկանյանը և Արաքսյա Ստեփանյանը հանդես են եկել «Տպագիր գովազդի տեսողական բաղադրիչը», «Նորաձևության իտալերենը տեխնիկայի և գովազդի միջև» և «Թարգմանչի ստեղծագործական ձիրքը» թեմաներով ելույթներով: Ներկա է գտնվել նաև ՀՀ-ում Իտալիայի Հանրապետության դեսպան Զովաննի Ռիչչուլին:

Հոկտեմբերի 21-ին ԵՊԼՀ-ում տեղի է ունեցել ճարտարապետ Զուլիեն Կիսայի **«Ճարտարապետների երկիր»** խորագրով դասախոսությունը, որի ներկա է գտնվել նաև ՀՀ-ում Շվեյցարիայի Համադաշնության դեսպան Լուկաս Գասսերը:

Հունարեն լեզվի միջոցառումներ

Մարտի 24-ին տեղի է ունեցել միջոցառում՝ նվիրված Հունաստանի ազատագրման ազգային տոնին և ներկայացում՝ **«Հայ և հույն հազարամյա բարեկամություն»** խորագրով:

Ապրիլի 6-ին կայացել է հանդիպում հույն ռեժիսոր Վասիլիս Կատերինոպուլոսի խմբի հետ:

Մայիսի 10-11-ը ԵՊԼՀ-ում անցկացվել են **հունարեն լեզվի որակավորման և վկայագրման** քննություններ:

Մայիսի 17-ին ԵՊԼՀ-ում կազմակերպվել է Պոնտոսի հույների ցեղասպանությանը նվիրված **«Արգոնավորդների ոսնահետքերով»** ֆիլմի դիտում:

Ս.թ. մայիսի 19-ին իրականացվել է երթ դեպի **Ծիծեռնակաբերդ**՝ հարգելու 1915-1922թթ հույն ժողովրդի ցեղասպանության զոհերի հիշատակը:

Մայիսի 26-ին կայացել է **նոր հունարեն լեզվի Համաշխարհային Օլիմպիադա ՅՈՒՆԵՍԿՈ-ի** Հունական կոմիտեի հովանու ներքո, արտասահմանում բնակվող հույների գլխավոր քարտուղարության համաշխարհային պոնտական հույների երիտասարդական համակարգող կոմիտեի աջակցությամբ, Սալոնիկիի Արիստոտելի անվան համալսարանի և Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի համագործակցությամբ:

Կորեերեն լեզվի միջոցառումներ

Հունիսի 4-ին Հյուսիսային պողոտայում կազմակերպվել է **Ֆլեշմոբ**, որի ժամանակ ցուցադրվել են կորեական փոփ և ազգային պարեր:

Հունիսի 24-26-ին կայացել է **«Կորեական մշակույթի ամառային ճամբար Արենիում»**, որի շրջանակներում Կորեական ակումբի և ԵՊԼՀ-ի շուրջ 40 ուսանողներ 3 օր Արենիում իրականացրել են կամավորական աշխատանքներ, տեղացի երեխաներին սովորեցրել են կորեական երգ ու պար և կազմակերպել են կորեական ֆիլմի դիտում:

Հոկտեմբերի 10-ին կայացավ «Կորեայի մշակույթի օր» խորագրով մրցույթ-միջոցառումը, որը իր մեջ ներառում էր խոսքի, շարադրության, երգի ու պարի մրցույթ : Միջոցառմանը ներկա էին Ռուսաստանում Կորեայի փոխդեսպանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Ռ. Մուրադյանը, ԵՊԼՀ ռեկտոր Գ. Գասպարյանը և այլոք: Միջոցառումը լուսաբանվել է Կորեայի առաջատար հեռուստաընկերություններից մեկի՝ KBS –ի կողմից:

Գրադարան

Հոկտեմբերի 6-8-ը ԵՊԼՀ-ում Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում անցկացվել է «Բրյուսովյան ընթերցումներ» XV միջազգային գիտաժողովը, որը նվիրված էր «Հայաստանի պոեզիա» ժողովածուի հրատարակման 100-ամյակին: Գիտաժողովը կազմակերպել էին Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանը՝ ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի, Երևանում գործող Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի, ԵՊԼՀ շրջանավարտների միավորման, Ռուսաստանի հայերի միության և «Անտարես» հոլդինգի աջակցությամբ:

Գիտաժողովին առկա և հեռակա կարգով մասնակցել են գիտնականներ 9 երկրներից՝ Հայաստանից, Ռուսաստանից (մոտ 10 քաղաքներից), Ուկրաինայից, ԱՄՆ-ից, Ճապոնիայից, Վրաստանից, Ֆրանսիայից, Չեխիայից և Լեհաստանից: Մասնակիցների թվում եղել են հայտնի գիտնականներ և երիտասարդ մասնագետներ:

ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԻ ԴԱՍԱԽՈՄՆԵՐ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

2016 թվականի ընթացքում ԵՊԼՀ-ում դասավանդել են **36** օտարերկրյա դասախոսներ Կորեայից, Ճապոնիայից, Եգիպտոսից, Ռումինիայից, Ուկրաինայից, Հնդկաստանից, Չինաստանից, Իրանից, Լեհաստանից, Իտալիայից, Գերմանիայից, Մեծ Բրիտանիայից, ԱՄՆ-ից և այլն:

2016թ. ԵՊԼՀ-ում ուսանել են ավելի քան **65** սփյուռքահայ և արտասահմանցի ուսանողներ Հունաստանից, Գերմանիայից, Սերբիայից, Իրանից, Կորեայից, Վրաստանից, Ռուսաստանից, Թուրքմենստանից, Սիրիայից, Լիբանանից, Հորդանանից:

ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀՅՈՒՐԵՐԻ ԱՅՑԵՐ

2016թ. ընթացքում ԵՊԼՀ են այցելել ՀՀ-ում **Գերմանիայի Դաշնային Հանրապետության** արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Բերնհարդ Մաթիաս Քիսլերը, ՀՀ-ում **Հունաստանի Հանրապետության** արտակարգ և լիազոր դեսպան պարոն Իոաննիս Տայիսը, ՀՀ-ում **Հնդկաստանի Հանրապետության** արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Սուրեշ Բաբուն, ՀՀ-ում **Ռումինիայի** արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Սորին Վասիլեն, ՀՀ-ում **Վրաստանի** արտակարգ և լիազոր դեսպան պարոն Գիորգի Սագանելիձեն, ՀՀ-ում **Հունաստանի Հանրապետության** դեսպան տիկին Նաֆսիկա Նենսի Էվա Վրայլան, ՀՀ-ում **Ֆրանսիայի Հանրապետության** արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Ժան-Ֆրանսուա Շարպանտիեն, ՀՀ-ում **Իտալիայի Հանրապետության** արտակարգ և լիազոր դեսպան Ջովաննի Ռիչուլլին, ՀՀ-ում **Կորեայի Հանրապետության** արտակարգ և լիազոր դեսպան Պակ Նո Փյոկը, ՀՀ-ում **Շվեյցարիայի Համադաշնության** դեսպան Լուկաս Գասսարը և այլն:

ԵՊԼՀ այցելած բարձրաստիճան հյուրերի շարքում կարելի է առանձնացնել **Բունդեսթագի Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության** պատգամավոր Ալբերտ Վայլերի այցը ԵՊԼՀ ա.թ. մայիսի 6-ին:

Հուլիսի 6-ին ԵՊԼՀ-ում չինական «Ընկերությունների համաշխարհային խումբ» ընկերության աջակցությամբ տեղի ունեցավ *ՀՀ-ում չինագիտության առաջին կենտրոնի* բացման արարողությունը, որին մասնակցեցին ներկայացուցիչներ **ՀՀ-ում ՉԺՀ-ի դեսպանությունից, ՀՀ ԿԳՆ-ից, ՀՀ ԱԺ-ից**, ինչպես նաև այլ բարձրաստիճան հյուրեր:

2016 թվականին տարբեր միջազգային ծրագրերի ԵՊԼՀ են այցելել նաև մեր գործընկեր համալսարաններից մի շարք դասախոսներ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

2016թ. համագործակցության պայմանագրեր են կնքվել հետևյալ համալսարանների հետ՝

1. Դալիանի օտար լեզուների համալսարան (Չինաստան)
2. Նորարարության և տեխնոլոգիայի արևմտադաճախական համալսարան (Ղազախստան)
3. Թելավի պետական համալսարան (Վրաստան)
4. Ռուսներենի ինստիտուտ (I.L.R)
5. Մանկավարժական համալսարանների եվրասիական ասոցացիա

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ, ԱՄԻԱԿԱՆ և ԱՊՀ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ

2016 թվականին ԵՊՀ-ն ակտիվ համագործակցություն է ծավալել եվրոպական, ասիական և ԱՊՀ մի շարք կրթական կառույցների հետ:

2016թ. ԵՊՀ 1 ուսանող ուսանել է Չեխիայի Հանրապետությունում, 1 ուսանող՝ Բելառուսում, 3 ուսանող՝ Լեհաստանում, 1 ուսանող՝ Լատվիայում, 2 ուսանող՝ Ռուսաստանում, 4 ուսանող՝ Ֆրանսիայում՝ Փարիզ – Սորբոն համալսարանի հետ համագործակցության շրջանակներում, 3 ուսանող՝ Գերմանիայում, 7 ուսանող՝ Իտալիայում, 1 ուսանող՝ Իսպանիայում, 2 ուսանող՝ Եգիպտոսում, 1 ուսանող՝ Հունաստանում, 2 ուսանող՝ Կորեայում, 23 ուսանող՝ Չինաստանում, 1 ուսանող՝ Բուլղարիայում /*Ընդամենը՝ 52 ուսանող*։

ԿՈՆՖՈՒՑԻՈՒՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Փետրվար 20-21-ը Ծաղկաձոր քաղաքում կայացավ Ուշուի ցուցադրության երեկոն:

Փետրվար 26-ին Չեխովի անվան թիվ 55 դպրոցում տեղի ունեցավ «Կոնֆուցիոսի դասարանի» բացումը:

Ապրիլի 15-ին ԵՊԼՀ նիստերի մեծ դահլիճում կայացավ «Գուգուն» պալատ-թանգարանի տնօրեն Շան Ծիսիանի դասախոսությունը: Ներկա էին ավելի քան 200 ուսանողներ:

Ապրիլի 18-ին ՊԼՀ ԿԻ դասախոսները 135 և 197 դպրոցներում բաց դաս անցկացրեցին աշակերտների հետ:

Ապրիլի 19-ին ԵՊԼՀ ԿԻ-ին անցկացրեց դասախոսությունների շարք նվիրված Հայ-չինական հարաբերություններին և պատմական կապերին:

Ապրիլի 26-ին Երևանի Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 29 դպրոցի «Կոնֆուցիոսի դասարանում» անցկացվեց կալիգրաֆիայի մրցույթ աշակերտների միջև:

Ապրիլի 28-ին տեղի ունեցավ «Չինարեն լեզվի կամուրջ» համաշխարհային մրցույթի հայաստանյան փուլը ուսանողների միջև 3-րդ անգամ, իսկ դպրոցականների միջև 1-ին անգամ: Միջոցառմանը ներկա էին ՀՀ-ում ՉԺՀ դեսպանը և այլ պաշտոնատար անձիք: Միջոցառման ընթացքում մասնակիցները ներկայացրեցին մենախոսություն չինարեն լեզվով, մշակութային համար և պատասխանեցին ժյուրիի հարցերին:

Մայիսի 12-ին կայացավ «Ամենախելացին» հաղորդաշարի 4-րդ եթերաշրջանի մասնակիցների նախընտրական փուլը: Համաձայն Արմենիա ԹՎ-ի և ԿԻ միջև պայմանավորվածության, այս եթերաշրջանի բոլոր հաղորդումների ընթացքում տեղ գտավ «Չինաստան» բաժինը, որը նվիրված էր Չինաստանի պատմությանը և մշակույթին:

Մայիսի 13-ին ԵՊԼՀ ԿԻ-ն հանդես եկավ նոր նախաձեռնությամբ և ստեղծեց «Կոնֆուցիոսի ինստիտուտի շրջանավարտների ակումբ» հարթակը:

Հունիս ամսին կայացավ եռօրյա «Չինական ավանդական բժշկության հիմունքներ» միջազգային գիտաժողովը՝ նվիրված չինական ավանդական բժշկության հիմունքներին և հիմնական մեթոդներին, ինչպես նաև ասեղնաբուժության, դադման, բանկային թերապիայի և Գուաշա մերսման տարբեր տեխնիկաներին:

Հուլիս-օգոստոս ամիսներին Չինաստանի Պեկին և Դալիան քաղաքներում կայացավ «Ամառային ճամբար 2016» երկշաբաթյա ծրագիրը, որի ընթացքում մասնակիցները ծանոթանան չինական մշակույթին և լեզվին:

Սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 2-ը ԵՊԼՀ պատվիրակությունը այցելեց Հոնկոնգի պոլիտեխնիկական համալսարան և հանդիպեց համալսարանի նախագահ պրոֆեսոր Թոնգի հետ: Ձեռք բերվեց պայմանավորվածություն երկու համալսարանների միջև ուսանողների փոխանակման, գիտական և կրթական ոլորտներում համագործակցելու վերաբերյալ:

Հոկտեմբերին 8-ից 9-ը կայացավ «Չինարենի տեղացի ուսուցիչների վերապատրաստում» խորագրով ծրագիրը:

2016 թվականի տվյալներով ԿԻ ուսանողների թիվը գերազանցում է 200-ը, իսկ ԿԻ-ի կողմից բացված կենտրոններում չինարեն ուսումնասիրողների թիվը գերազանցում է 1000-ը:

Այս պահին ԵՊԼՀ-ում դասավանդում են ավելի քան 21 չինացի և տեղացի մասնագետներ:

Այս պահին չինարեն-հայերեն թարգմանչական բաժնում սովորում է 22 ուսանող (3-րդ կուրս՝ 8, 2-րդ՝ 4, 1-ին՝ 10): Իսկ որպես 2-րդ և 3-րդ օտար լեզու ԵՊԼՀ-ի ավելի քան 100 ուսանող ուսումնասիրում է չինարեն:

2016 թ. տվյալներով 23 ուսանող սովորում են Չինաստանի բուհերում՝ Ջիլինի համալսարան, Դա Լի համալսարան, Սուճոու համալսարան, Դալիանի օտար լեզուների համալսարան, Պեկինի լեզուների և մշակույթի համալսարան, Թիանձինի համալսարան, Սիամենի համալսարան և այլն:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

ԵՊԼՀ-ն շարունակում է իրականացնել **Erasmus Mundus** ծրագրի երկու նախագծերի, որոնք գործելու են մինչև 2017 թ:

Դրանք են՝

1. ՅԱՆՈՒՍ II / Inter-Academic Network ErasmUs MunduS II/
2. Effort /Education Force: Driving Mobility for EU- East Europe cooperation/

Erasmus Mundus-ի շրջանակներում իրականացվող ծրագրերը առաջարկում են կրթաթոշակներ ուսանողներին, դասախոսներին, հետազոտողներին և բուհերի աշխատակիցներին ցանկացած գիտական բնագավառում:

2016 թվականին Էրազմուս Մոնդուս EFFORT ծրագրի շրջանակներում ԵՊԼՀ բակալավրի 1 ուսանող, ասպիրանտուրայի 2 հետազոտող 10 ամիս ժամկետով ուսանում են Հունաստանի գործընկեր համալսարանում:

Եվրոպական կամավորական ծրագրի շրջանակներում /EVS/ ԵՊԼՀ-ն ընդունել է 8 կամավորի, որոնք համալսարանում անցկացնում են օտար լեզուների արտալսարանային դասընթացներ, ինչպես նաև կազմակերպում մշակութային միջոցառումներ:

2016թ ԵՊԼՀ-ն կնքել է պայմանագրեր **Էրազմուս+** ծրագրի **Միջազգային կրեդիտային շարժունության գործողության** շրջանակներում, որը փոխարինում է Էրազմուս Մոնդուսի Գործողություն 2-ին: Ծրագիրը նախատեսում է շարժունության հոսքեր բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար:

Գործում են պայմանագրեր հետևյալ համալսարանների հետ՝

1. Վիդզեմեի կիրառական գիտությունների համալսարան /Լատվիա/
2. Ալեքսանդրու Իոան Կուզա համալսարան /Ռումինա/
3. Լոդզի համալսարան / Լեհաստան/
4. Նեապոլի արևելագիտության համալսարան /Իտալիա/
5. Գրանադայի համալսարան /Իսպանիա/
6. Տարտուի համալսարան/Էստոնիա/
7. Լուվենի կաթոլիկ համալսարան/ Բելգիա/

ԵՊԼՀ-ն շարունակում է իրականացնել հետևյալ **Տեմայում** ծրագրերը՝

1. **Achieving and Checking the Alignment between Academic Programmes and qualification frameworks** (համակարգող),
2. **Structural Development of the Third Cycle Based on Salzburg Principles,**
3. **Fostering Autonomy and Accountability: Development of State-of-the-art HE Management System for Efficient Changes in Line with Bologna Principles,**
4. **Implementation of National and Sectorial Qualifications Frameworks in Armenia,**
5. **Strengthening the Specific Role of Universities as LLL Institution,**
6. **Development of New Modules for International Bachelor and Master Programmes in Sustainable Tourism Management .**

ԵՊԼՀ-ն Էրազմուս+ Հիմնական Գործողություն 2 Կարողությունների զարգացմանը միտված գործընկերային ծրագրերի շրջանակներում իրականացնում է **Library Network support services: modernizing libraries in Armenia, Moldova and Belarus through library staff development and reforming libraries /LNSS/** ծրագիրը:

ԵՊԼՀ-ն 2016 թ. ստացավ Ժան Մոնե մոդուլի շրջանակներում **“European integration and EU Values: Human rights, Democracy and the Rule of Law”** ծրագիրն իրականացնելու իրավունք:

5. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

2016թ. ընթացքում համալսարանը հազեցվել է հետևյալ համակարգչային ու տեխնիկական միջոցներով.

- Կոնֆուցիուսի ինստիտուտի համար ձեռք է բերվել 6 սեղանի, 1 դյուրակիր համակարգիչ և 2 մուլտիմեդիա պրոյեկտոր:
- TEMPUS ALIGN դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 7 համակարգիչ /ամենը մեկում/ և 1 դյուրակիր համակարգիչ:
- TEMPUS GOVERN դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի կողմից ԵրՊԼՀ-ին անհատույց հանձնվել է 1 սերվեր համակարգիչ, 4 համակարգիչ և 1 անխափան սնուցման սարք:
- Սուտոմա միջազգային տուրիզմի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 2 դյուրակիր համակարգիչ, 1 մուլտիմեդիա պրոյեկտոր, 1 բազմաֆունկցիոնալ տպիչ սարք: Համակարգչային ու տեխնիկական միջոցներով կահավորվել է 3215 լսարանը:
- TEMPUS SSRULLI դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռք բերված 6 դյուրակիր համակարգիչներով և հեռուստացույցով կահավորվել է 4102 լսարանը, որտեղ տեղափոխվել է լրացուցիչ ու շարունակական կրթության կենտրոնը:
- Տեխնիկական միջոցներով կահավորվել են 2 նոր լսարաններ (4201 և 1109):
- Համալսարանի չինագիտության ռեսուրս կենտրոնի համար բարերարների աջակցությամբ ձեռք է բերվել 16 դյուրակիր համակարգիչ, հեռուստացույց, լազերային տպիչ, բարձրախոսներ, խոսափողներ, ուժեղացուցիչներ և հարակից պարագաներ: Համակարգչային ու տեխնիկական միջոցներով կահավորվել է 2203 լսարանը: Բացի այդ կատարվել է լսարանի վերանորոգում, համապատասխան կահույքի ձեռք բերում, տեղային համակարգչային ցանցի ստեղծում և համալսարանի ցանցին ու համացանցին միացում: Հուլիսի 6-ին տեղի ունեցավ չինագիտության ռեսուրս կենտրոնի հանդիսավոր բացումը:



Տեսալսողական նյութերի մշակումը և թվայնացումը

- Արխիվացվել են 2015-2016թթ ֆոտոնյութեր (4 DVD սկավառակ), 2015-2016թթ տեսագրություններ (8 DVD սկավառակ) և ձայնագրություններ (4 DVD սկավառակ)
- Կատարվել է 2016թ. պետական ավարտական քննությունների ձայնագրում և արխիվացում (4 DVD սկավառակ):
- Թվայնացվել են ամբիոնների պատվերներով 2 ուսումնական դասընթացների ձայնագրությունները (1. Mortimer weak forms, 2. Վ.Դ.Արակլին)

Էլեկտրոնային թեստավորումը և էլ. ուսուցումը ԵՊԼՀ-ում

- Արխիվացվել են 2015-2016 ուս.տարվա էլ.թեստավորման և էլ.ուսուցման կառավարման համակարգերի բազաները:
- 2015-2016 ուս.տարվա 2-րդ կիսամյակում իրականացվել են էլեկտրոնային թեստեր կրթական 3 մակարդակներում 3 թեստեր, որին մասնակցել են 43 խումբ՝ 577 ուսանողներ:
- 2016-2017 ուս.տարվա 1-ին կիսամյակում իրականացվել են էլեկտրոնային թեստեր կրթական 2 մակարդակներում 2 թեստ, որին մասնակցել են 55 խումբ՝ 718 ուսանողներ:
- 2016-2017 ուս.տարվա 1-ին կիսամյակում իրականացվում են արտալսարանային աշխատանք-գիտելիքի ստուգում էլեկտրոնային թեստերի միջոցով «Անգլերեն քերականություն» առարկայից կրթական 2 մակարդակներում 2 թեստ, որը նախատեսված է 52 խմբի համար:

Իրականացվող ուսումնամեթոդական աշխատանքները

Մշակվել են նոր էլեկտրոնային դասընթացներ տարբեր մասնագիտությունների համար, վերանայվել են նախկին դասընթացները և ավելացվել նոր բաժիններ: Moodle էլեկտրոնային ուսուցման կառավարման հարթակի վրա մշակվել և իրականացվում են դասընթացներ հետևյալ դիսցիպլիններից.

- Տուրիզմ
 - Քաղաքային տուրիզմի կազմակերպում
 - Տուրօպերատորական գործ
 - Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները տուրիզմում
- Կրթության կառավարում
 - գիտական շարադրանքի մեթոդներ
- Լեզուների դասավանդման մեթոդիկա
 - Եվրոպական լեզվական թղթապանակ
 - Օտար լեզվի դասավանդման մեթոդիկա ՄՈՒՀ-ում
 - Ավագ դպրոցում անգլերենի դասավանդման մեթոդիկա
 - Տարրական դպրոցում օտար լեզվի դասավանդման մեթոդիկա
- Հայագիտություն
 - Խոսքի գործառնական տեսակները
 - Գրավոր և բանավոր խոսքի հմտություններ
 - Հայոց լեզվի գրավոր և բանավոր հաղորդակցման հիմունքներ
 - Հայերենը որպես օտար լեզու
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ
 - Տեղեկատվական տեխնոլոգիաներ և համակարգեր
 - Ուսումնաօժանդակ նյութերի պատրաստման տեխնոլոգիա
 - HTML նշագրման լեզվի դասընթաց

Այդ դասընթացները դասավանդվում են խառը տիպի ուսուցման մոդելով:

- ԵՊԼՀ-ում էլեկտրոնային ուսուցման իրականացմանը զուգընթաց իրականացվում է պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում, որի համար մշակվել է «Էլեկտրոնային դասավանդման տեխնոլոգիաներ» գործնական դասընթացը: 2016-

2017 ռւս.տարվա 1-ին կիսամյակում պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման արդյունքում մշակվել են հետևյալ խառը տիպի դասընթացները.

- Politische Lexik und ihre Analyse
- Book Discussion
- Contemporary Methods of Teaching English
- Professional English for IT students
- Հումանշությունը հայերենում

Ուսումնական գործընթացի կառավարման էլեկտրոնային համակարգը ԵՊԼՀ-ում

- Համալսարանում գործում է փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգը:
- Գործում է Ուսանողների գնահատման էլեկտրոնային ավտոմատացված համակարգ: Համակարգը հնարավորություն է տալիս ստանալ ավելի քան 20 հաշվետվություններ ուսումնական գործընթացի և ուսանողների գնահատման համակարգերի վերաբերյալ:
- Համալսարանում սկսվել են աշխատանքներ TEMPUS GOVERN դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ստեղծված «Ուսուցման գործընթացի կառավարման ավտոմատացված համակարգ» համակարգչային ծրագրի հնարավորությունների հետ ծանոթացումը և տեղայնացման համար անհրաժեշտ բաղադրիչների բացահայտման գործընթացը:

Համալսարանի կայքը (www.brusov.am)

- Գործում են նաև հետևյալ ենթակայքերը.
 - ✓ confucius.brusov.am
 - ✓ journ.brusov.am
 - ✓ old.brusov.am
 - ✓ mail.brusov.am
 - ✓ exam.brusov.am
 - ✓ credit.brusov.am
 - ✓ align.brusov.am
 - ✓ moodle.brusov.am

Տեղեկատվություն ԵՊԼՀ-ում համակարգչային և տեխնիկական միջոցներով հագեցվածության մասին.

- Բոլոր ստարաբաժանումները, ամբիոնները, դեկանատները, կենտրոնները համալրված են համակարգիչներով և միացված են համալսարանի համակարգչային ցանցին:
- Համակարգչային ցանցին միացած բոլոր համակարգիչներին տրամադրվում է 16 Մբիթ/վրկ արագագործությամբ Համացանց:
- Համալսարանում գործում է նաև անլար (WiFi) 3 Մբիթ/վրկ արագագործությամբ Համացանց:
- Համալսարանում գործում են համակարգչային և տեխնիկական միջոցներով հագեցած 14 համակարգչային լսարաններ, սրահներ, լաբորատորիաներ, 3 դահլիճներ և 15 լսարաններ: Այնտեղ պարբերաբար կատարվում է պրոֆիլակտիկ տեխնիկական սպասարկում:
- Կատարվել են համալսարանի բոլոր միջոցառումների ֆոտովիդեո նկարահանումները:

Տեղեկատվություն գրադարանի մասին / 2016

Ընթերցողների թիվը /ուս. և աշխ./	3222
Գրքերի շրջանառություն սպասարկման բաժնից/ հաճախումներ Առցանց պատվեր	59590գիրք/19580 ուս. 204
Գրքերի շրջանառություն ընթերցասրահից/հաճախումներ	6976 գիրք/3923 ուս.
Համալրվել է	957 օրինակ
Տեղեկատվական բաժնից օգտվողների թիվը/տարեկան	5846 ուս. դաս., մագ., ասպ.
Փակ մատչելիության սկզբունքով օգտագործվող էլ. գրքեր	168
ALEPH ծրագրով ներմուծվել է – հիմն. Ֆոնդ 3211 գ.	4168 գիրք
Ավստրիական գրադարանը համալրվել է գրքերով	330 օրինակ

- Էլեկտրոնային գիտական գրականություն - EBSCOhost, *eLIBRARY*, SpringerLink, Polpred.com, Sage Journals, Duke University Press, Science Direct, DOAB, DOAJ, OpenDoar և այլ:



ԵՊԼՀ գրադարանը

- համագործակցում է Հայաստանի բոլոր բուհական գրադարանների հետ՝ գրքերի փոխանակում, փորձի փոխանակում: Կազմակերպվում են սեմինարներ, հանդիպումներ էլեկտրոնային գրացուցակի աշխատանքների վերաբերյալ,
- հանդիսանում է Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումի անդամ: Կազմակերպում է սեմինարներ ինչպես ԵՊԼՀ դասախոսների և ուսանողների, այնպես էլ այլ գրադարանների աշխատակիցների համար: Կոնսորցիումի նախագահն է ԵՊԼՀ գրադարանի վարիչը,
- իրականացնում է միջգրադարանային բաժնույթ Ազգային գրադարանի և ՀՀ ԳԱԱ ֆունդամենտալ գրադարանի հետ,
- իրականացնում է գրքափոխանակություն Վաշինգտոնի Կոնգրեսի գրադարանի հետ,
- ԵՊԼՀ օտարալեզու ֆոնդերը համալրվում են դեսպանատների և հյուպատոսարանների միջոցով՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Շվեյցարիայի, Իտալիայի, Հոլանդիայի, Չինաստանի և այլն,
- ԵՊԼՀ գրադարանում գործում է Ավստրիական գրադարանը, որը հանդիսանում է որպես այդ երկրի մշակութային և գիտական կենտրոն Հայաստանում: Այդ գրադարանի գործունեության շրջանակներում կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, գիտաժողովներ, սեմինարներ, դասընթացներ՝ Ավստրիայից և Շվեյցարիայից հրավիրված պրոֆեսորների մասնակցությամբ: Այս գրադարանում իրականացվում է Ավստրիայից, Գերմանիայից ժամանած կամավորների պրակտիկան: Յուրաքանչյուր տարի Ավստրիական գրադարանի գրադարանավարներն անցնում են երկշաբաթյա վերապատրաստում Ավստրիայում,
- ընդգրկված է որպես գործընկեր Erasmus+ Capacity Building in Higher Education "Library Network Support Services: modernising libraries in Armenia, Moldova and Belarus through library staff development and reforming libraries" /LNSS/ ծրագրում,
- համագործակցում է ՄԱԿ-ի, Եվրախորհրդի, ԵԱՀԿ գրասենյակների հետ,
- համագործակցում է «Առաջին գրական գործակալության», «Անտարես», «Զանգակ», Մոսկվայի «Совпадение», «Квадривиум» հրատարակչությունների հետ: Կազմակերպվում են գրքերի շնորհանդեսներ, հանդիպումներ գրողների հետ, այդ թվում՝ արտասահմանյան:

6. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են տարվել ուսանողական ինքնակառավարման մարմնի՝ ուսանողական խորհրդի կարողությունների զարգացման և բուհի կառավարման գործում սովորողների մասնակցության ընդլայման ուղղությամբ: Ուսանողական խորհրդի ներկայացուցիչները ներգրավված են և մասնակցում են ԵՊԼՀ կառավարման մարմինների աշխատանքներին: ԵՊԼՀ տարբեր հանձնաժողովներում և աշխատանքային խմբերում ներգրավված են նաև սովորող անդամներ: Ուսանողական խորհրդի նախագահը ներգրավված է նաև մանդատային հանձնաժողովում:

2. ԵՊԼՀ ղեկավարությունը /ռեկտոր, պրոռեկտորներ, դեկաններ և այլ ստորաբաժանումների ղեկավարներ/ բազմաթիվ հանդիպումներ են ունեցել ուսանողների հետ: Հանդիպումների ընթացքում ուսանողներին տեղեկատվություն է տրամադրվել գործող կրթական համակարգի, ուսանողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

3. 1-ին կուրսի բոլոր ուսանողներին բաժանվել է Ուսանողի ուղեցույցը, ինչը հնարավորություն է տվել նրանց ծանոթանալու ԵՊԼՀ կառուցվածքին, կանոնադրությանը, ուսանողների իրավունքներին և պարտականություններին:

4. ԵՊԼՀ ուսանողները տեղեկատվական բնույթի հանդիպում են ունեցել Էստոնիայի 3 խոշոր համալսարանների ներկայացուցիչների հետ /փետրվար/:

5. 30 ուսանողներ մասնակցել են Գևորգյան ճեմարանում կազմակերպված խոկման արարողությանը /մարտի 21/:

6. ԵՊԼՀ ուսանողները մասնակցել են Լեոնային Ղարաբաղի անկախության 25-րդ տարեդարձին նվիրված Արցախի պետական համալսարանի կազմակերպած ուսանողական գիտաժողովին /ապրիլ/:

7. ՀՀ Կենտրոնական բանկը «Իմ ֆինանսների ամիսը» ծրագրի շրջանակներում ուսանողների համար կազմակերպել է բազմաթիվ տեղեկատվական և ուսուցողական միջոցառումներ /սեմինարներ, բանավեճեր, մրցույթներ, ինտելեկտուալ առաջնություն, շրջագայություն և այլն /ապրիլ/:

8. ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվերով «Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի հետ իրականացվել է ՀՀ ուսանողների կենսառճի և Բոլոնիայի գործընթացի գնահատման վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտություն /ապրիլ/:

9. ԵՊԼՀ ներկայացուցիչները մասնակցել են «Էյ Լի համալսարանը Երևանում. ուսանողներ և շրջանավարտներ առանց սահմանների» խորագրով միջոցառմանը /ապրիլ 15-16/:

10. Ապրիլի 28-ին Արմենիա Մարիոթ հյուրանոցային համալիրի Արարատ դահլիճում տեղի ունեցած «Զինարեն լեզվի կամուրջ» համաշխարհային 15-րդ մրցույթի հայաստանյան ուսանողական 3-րդ փուլում Ժյուրիի քվեարկության արդյունքներով մրցույթի հայաստանյան փուլի հաղթող ճանաչվեց ԵՊԼՀ թարգմանության և միջմշակութային հաղորդակցման ֆակուլտետի տուրիզմ բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Անուշ Սաշայի Մինասյանը: Ա. Մինասյանը հնարավորություն ստացավ մեկնելու Չինաստան՝ մասնակցելու մրցույթի եզրափակիչ փուլին:

11. ԵՊԼՀ ուսանողները մասնակցել են Հայաստանի պետական ֆիլիարմոնիայի «Ուսանողական ֆիլիարմոնիա» ծրագրի շրջանակներում կազմակերպված մրցույթ-փառատոնին /մայիս/:

12. ԵՊԼՀ ուսանողները մասնակցել են «Բաց հասարակություն հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության կողմից հայտարարված «Կանանց և տղամարդկանց հավասար հնարավորություններ» թեմայով շարադրությունների մրցույթին:

13. Կազմակերպվել են միջոցառումներ նվիրված Սրբոց Վարդանանց և Սրբոց Թարգմանչաց տոներին:

14. «Ուսանողական ջոկատների հանրապետական շտաբ-կամավորական աշխատանքների ծառայություն» հասարակական կազմակերպության շնորհիվ մի շարք ուսանողներ մասնակցել են շինարարական, բարեկարգման, գյուղատնտեսական, սպասարկման ոլորտի և այլ աշխատանքների:

15. ԵՊԼՀ մի շարք ուսանողներ, որպես ջոկատավարներ, մասնակցել են Ծաղկաձոր և Հանքավան քաղաքներում անցկացված ճամբարային աշխատանքներին: ԵՊԼՀ ուսանողների իրականացրած աշխատանքը բարձր է գնահատվել ճամբարների տնօրենների կողմից /հուլիս-օգոստոս/:

16. ԵՊԼՀ ուսանողները մասնակցել են «Airbus» ընկերության և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից համատեղ անցկացվող «Թներ տուր քո մտահաղացումներին» 5-րդ մրցույթին:

17. «Պատերազմի և զինված ուժերի վետերանների» կոմիտեի հիմնադրման 60-ամյակի կապակցությամբ կազմակերպվել է Հայրենական Մեծ պատերազմի վետերանների հանդիպում ուսանողների հետ:

18. ԵՊԼՀ ուսանողուհի Շողեր Բողարյանը մասնակցել է ՀՀ Անկախության 25-րդ տարեդարձին նվիրված «Անկախության սերունդ» համահայստանյան երգչախմբի և նվագախմբի կազմակերպած հանդիսավոր համերգին:

19. ԵՊԼՀ ներկայացուցիչները մասնակցել են «Նորարարությունների կառավարում» 2-րդ միջազգային երիտասարդական գիտական դպրոցի աշխատանքներին /սեպտեմբեր 30-հոկտեմբեր 2/:

20. ԵՊԼՀ ուսանողները մասնակցել են Վանաձորի պետական համալսարանի կազմակերպած գիտական նստաշրջանին /հոկտեմբեր 14/:

21. Անգլերեն և իսպաներեն լեզուներին տիրապետող ԵՊԼՀ 30 կամավորներ մասնակցել են ՄԱԿ ԶՀԿ աֆիլացված անդամների 38-րդ նստաշրջանի կազմակերպչական աշխատանքներին /հոկտեմբեր/:

22. ԵՊԼՀ կոլեկտիվը ակտիվորեն մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կազմակերպած համաքաղաքային ծառատունկներին և շաբաթօրյակներին:

23. Աջակցություն է ցուցաբերվել ԵԱՀԿ երևանյան գրասենյակին և Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիային «Educational Bus» ծրագրի իրականացման գործում:

24. ԵՊԼՀ նախկին ուսանող Տիգրան Սահակյանի հովանավորությամբ ուսանողների շրջանում անցկացվել «I did not ask to be Armenian, I just got lucky» թեմայով շարադրության մրցույթ, որի հաղթող 5 ուսանողներ պարգևատրվել 400-ական ԱՄՆ դոլարով:

25. ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի դեմոկրատիայի զարգացման մոնիթորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղի, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ միասին իրականացվել է «Հայաստանի Հանրապետության երիտասարդ ընտրող» կրթական ծրագիրը: Միջոցառման ընթացքում շուրջ 200 ուսանողներ մասնակցել են դասախոսությունների և գործնական դասընթացների՝ ընտրական գործընթացների և ընտրողների իրավունքների վերաբերյալ:

26. Երիտասարդների և ուսանողների միջազգային կապերի և փոխանակման հայկական կենտրոնի նախագահ Արմեն Հայրումյանը ԵՊԼՀ ուսանողների հետ հանդիպումներում ներկայացրել է «Work and Travel» ծրագիրը:

27. «Բրիտանական խորհրդի» ներկայացուցիչները ԵՊԼՀ ավարտական կուրսի ուսանողներին ներկայացրել են Մեծ Բրիտանիայում ուսումը շարունակելու հնարավորությունները:

28. Կառավարության համապատասխան որոշման համաձայն համալսարանը իրականացրել «Լավագույն ուսանող» անվանական կրթաթոշակի 1-ին փուլը: ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծված մրցույթի 2-րդ փուլի

կազմակերպման հանձնաժողովի աշխատանքներին մասնակցել է նաև ԵՊԼՀ սոցիալական զարգացման և ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Ց. Ակոպյանը: ԵՊԼՀ ուսանողուհի Գոհար Մնացականյանը 3-րդ տեղն է զբաղեցրել բակալավրիատի հումանիտար ոլորտում, իսկ Անի Միքայելյանը՝ մագիստրատուրայի հումանիտար ոլորտում:

29. «ԵՊԼՀ Լավագույն ուսանող» մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման» կանոնակարգի համաձայն կազմակերպվել է «ԵՊԼՀ Լավագույն ուսանող-2016» մրցանակաբաշխությունը:

30. Հանրապետական ուսանողական մարզական 17-րդ խաղերին մասնակցել են նաև ԵՊԼՀ ուսանողները՝ սեղանի թենիս /տղաներ /7-րդ տեղ/ և աղջիկներ /4-րդ տեղ/, շախմատ /աղջիկներ, 4-րդ տեղ/ և վոլեյբոլ /աղջիկներ, 4-րդ տեղ/:

31. ԵՊԼՀ վոլեյբոլի աղջիկների թիմը մասնակցել Վոլեյբոլի ՀՀ առաջնությանը /3-րդ տեղ/ և Ֆեդերացիայի գավաթի խաղարկությանը:

32. ՀՀ պաշտպանության նախարարության և Հայ-ռուսական /սլավոնական/ համալսարանի կազմակերպած մարզամշակութային առաջնությանը ԵՊԼՀ ուսանողները մասնակցել են շախմատի տղաների անհատական /6-րդ տեղ/, ֆուտզալի տղաների /6-րդ տեղ/ և սեղանի թենիսի մրցումներին:

33. Հայաստանի Երիտասարդական հիմնադրամի կազմակերպած «Բազե-2016» համահայկական խաղերին ԵՊԼՀ 4 ուսանողներ արժանացել են մրցանակների /շախմատ /աղջիկներ/ 1-ին տեղ, վոլեյբոլ /աղջիկներ/ 3-րդ տեղ, սեղանի թենիս 1-ին տեղ, ֆուտզալ 3-րդ տեղ:

34. ԵՊԼՀ-ում կազմակերպվել են ներհամալսարանական առաջնություններ մի շարք մարզաձևերից /թեթև աթլետիկա, կրոսսավազք /63 մասնակից/, սեղանի թենիս /38 մասնակից/ և այլն/:

35. ԵՊԼՀ-ն մասնակցել է «Աշխարհի երեխաները» ՌԴ բարեգործական հիմնադրամի «Առողջ ապրելակերպ» գլոբալ երիտասարդական շարժմանը:
36. Մշակվել և ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարություն են ներկայացվել մասսայական սպորտի զարգացման ԵՊԼՀ առաջարկությունները:
37. Աշխատանքներ են իրականացվել ներառական կրթության ապահովման համար: ԵՊԼՀ ներկայացուցիչը ակտիվորեն մասնակցել է ՀՀ վարչապետի 2008 թվականի փետրվարի 25 N 98-Ն որոշմամբ ստեղծված Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի աշխատանքներին:
38. ՀՀ Կառավարության 2015թ. Օգոստոսի 31-ի նիստի N 40 որոշման համաձայն իրականացվել են մի շարք միջոցառումներ հաշմանդամություն ունեցող անձանց համար 2016թ. հավասար հնարավորությունների տարի հայտարարելու շրջանակներում:
39. Սեպտեմբեր ամսին «Հատուկ պոլիկինիկա» ՓԲԸ-ի բժշկական հանձնաժողովը բուժ-կանխարգելիչ գնության է ենթարկել համալսարանի 1-ին կուրսի ուսանողներին: ԵՊԼՀ բակալավրիատ ընդունված 498 ուսանողներից բուժզննմանը մասնակցել են 450-ը: Հիվանդություն ունեցող ուսանողները վերցվել են դիսպանսեր հսկողության տակ:
40. Ավանդույթի համաձայն ԵՊԼՀ-ում անցկացվեց անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուների դպրոցական առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը /ապրիլ/:
41. 2011թ . -ից Կարիերայի կենտրոնի կողմից ԵՊԼՀ-ում իրականացվում է EVS «Եվրոպական կամավորական ծառայություն» ծրագիրը, որը ֆինանսավորվում է Եվրամիության «Էրագմուս+» ծրագրի կողմից: Ծրագրի շրջանակներում ԵՊԼՀ-ն եվրոպական երկրներից հյուրընկալում է կամավորներ, ովքեր իրականացնում են համապատասխան լեզուների արտալսարանային ոչ ֆորմալ դասընթացներ ուսանողների, շրջանավարտների, աշխատակիցների համար՝ նախաձեռնելով ակումբներ, միջոցառումներ, ֆիլմերի դիտումներ և քննարկումներ: 2015-2016թթ. ԵՊԼՀ-ն հյուրընկալել է 8 կամավոր:

42. Կարիերայի կենտրոնի աջակցությամբ ԵՊԼՀ ուսանողները և շրջանավարտները EVS ծրագրի շրջանակներում մեկնել են եվրոպական տարբեր երկրներ՝ 2 շաբաթից մինչև 12 ամիս տևողությամբ կամավորական ծրագրերին մասնակցելու նպատակով՝

43. ԵՊԼՀ ուսանողների և շրջանավարտների հետ շարունակական կապը պահելու նպատակով 2010թ.-ից սկսած ԵՊԼՀ Կարիերայի կենտրոնը Շրջանավարտների միավորման հետ համատեղ իրականացնում է ԵՊԼՀ ուսանողների և շրջանավարտների տվյալների հավաքագրում, էլեկտրոնային բազայի ստեղծում և տվյալների պարբերաբար թարմացում:

44. Էլեկտրոնային հասցեների ու խմբերի, ինչպես նաև ԵՊԼՀ կայքի և սոցիալական ցանցերի միջոցով Կարիերայի կենտրոնը ազգային, տարածաշրջանային և միջազգային կրթական ծրագրերի, թափուր աշխատատեղերի, սեմինարների, կամավորական ծրագրերի և դասընթացների վերաբերյալ տեղեկատվության է տարածել ուսանողների և շրջանավարտների շրջանում:

45. Կազմակերպվել է ամենօրյա խորհրդատվություն՝ ինքնակենսագրական, մոտիվացիոն նամակ, երաշխավորագիր, ուղեկցող նամակ կազմելու, ինչպես նաև կրթական և կամավորական ծրագրերին դիմելու և աշխատանքային հարցազրույցի ներկայանալու վերաբերյալ:

46. Պետական, մասնավոր և հասարակական կազմակերպություններում կազմակերպվել են ինթերնշիփներ, որոնց շրջանակներում ուսանողներն ու շրջանավարտները վճարովի կամ կամավոր հիմունքներով ոչ պարտադիր պրակտիկա են անցել («Յուքոմ» հեռահաղորդակցական ընկերություն, Վիվա Սել ՄՏՍ, Ինգո Արմենիա, Ռոստելեկոմ, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, Գործատուների հանրապետական միություն և այլն):

47. Պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ աշխատանքային գործակալությունների, պետական գերատեսչությունների, միջազգային

կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, դիվանագիտական, ինչպես նաև բիզնեսի և կրթական ոլորտի ներկայացուցիչների հետ, ովքեր ԵՊԼՀ ուսանողներին և շրջանավարտներին ներկայացրել են կազմակերպությունների կողմից առաջարկվող թափուր աշխատատեղերը, կրթական, երիտասարդական և կամավորական ծրագրերը, սեմինարները և դասընթացները ՀՀ-ում և արտերկրում, կրթաթոշակները և այլն:

48. ԵՊԼՀ կարիերայի կենտրոնը համագործակցել է «Վիվա Սել ՄՏՍ» ընկերության, «Յուքոմ» հեռահաղորդակցական ընկերության, Ռոստելեկոմի, Ռոսգոստրախի, Հյուր սերվիսի, «Արմենիա» ապահովագրական գործակալության, ՄԳԱ Կոնտինենտի, Երիտասարդական ակումբների դաշնության, Հայ առաջադեմ երիտասարդության, Կրթություն Հայաստանի, Հայաստանի գործատուների հանրապետական միության, «Գլոբբինգ» ընկերության, «Մալխասյան» Քընսալթինգի, «Ֆինանսաբանկային քոլեջ» հիմնադրամի, «Գաուդեամուս» թարգմանչական գրասենյակի, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության» կենտրոնի, Երևանի շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնի, Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի, ՀՀ Արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն ՊՈԱԿ-ի, Փարիզ հոթելի և այլ կազմակերպությունների հետ:

49. 2016թ. Կարիերայի կենտրոնը կազմակերպել է 31 հանդիպում և 6 սեմինար, որոնց ընդհանուր առմամբ ներկա է գտնվել է 914 մասնակից:

50. Համագործակցության հուշագիր է կնքվել և համատեղ ծրագրեր է իրականացվել «Դասավանդի՛ր, Հայաստան», Իրավաբանների հայկական ասոցիացիա և այլն կազմակերպությունների հետ:

51. Կարիերայի կենտրոնը պարբերաբար մասնակցել է կրթական տոնավաճառների, մասնագիտացված ցուցահանդեսների:

52. Կարիերայի կենտրոնը ԵՊԼՀ ուսանողներին, շրջանավարտներին և աշխատակիցներին տրամադրել է դասական համերգների, ներկայացումների հրավիրատուներ:

53. 2016թ. -ին անցկացվել է «Բաց դռներ» ծրագիրը, որի շրջանակներում ԵՊԼՀ-ն կազմակերպել է Երևանի և մարզերի հիմնական և ավագ դպրոցների աշակերտների այցելություն և շրջայց համալսարանում՝

ա/ 2016թ. փետրվար - Երևանի Գ. Վարդանյանի անվան թիվ 192 հիմնական դպրոց

բ/ 2016թ. փետրվար – Աբովյանի թիվ 6 ավագ դպրոց

գ/ 2016թ. փետրվար – Երևանի Ղևոնդ Ալիշանի անվան թիվ 95 միջնակարգ դպրոց

դ/ 2016թ. փետրվար - Երևանի թիվ 175 միջնակարգ դպրոց:

54. 2016թ. փետրվարի 2-ին ԵՊԼՀ անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնը, կարիերայի կենտրոնը և շրջանավարտների միավորումը նախաձեռնել էին կլոր սեղան-քննարկում «Բուհ-գործատու համագործակցություն. թարգմանչական կրթական ծրագրերի վերջնարդյունքների համաձայնեցումը գործատուների հետ» խորագրով: Հանդիպման նպատակն էր հնարավորինս մերձեցնել բուհական կրթական ծրագրերը աշխատաշուկայի պահանջներին և համապատասխանեցնել դրանք որակավորումների ազգային շրջանակի պահանջներին՝ նպաստելով երիտասարդ մասնագետների ներգրավմանը տեղական և միջազգային աշխատաշուկա:

55. 2016թ. սեպտեմբերի 26-ին Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում անց է կացվել է «Լեզուների եվրոպական օր» միջոցառումը: Միջոցառմանը մասնակցում էին ԵՊԼՀ բոլոր ստորաբաժանումները, ինչպես նաև Երևան քաղաքի թվով 18 դպրոցներ և Աբովյան քաղաքի թիվ 6 ավագ դպրոցը:

56. 2016թ. հոկտեմբերի 20-ին Գորիս քաղաքում և հոկտեմբերի 21-ին Կապան քաղաքում իրականացվել է «Մասնագիտությունների օր 2016» ծրագիրը: Ծրագրի նպատակն էր ներկայացնել ԵՊԼՀ բակալավրական և մագիստրոսական ծրագրերը, ընդունելության կարգը, ինչպես նաև բուհի կողմից դասավանդվող 18 օտար լեզուները և կրթական

հնարավորությունները: Գորիս քաղաքում միջոցառմանը մասնակցել է 6 դպրոց, իսկ Կապան քաղաքում՝ 11 դպրոց: Միջոցառման շրջանակներում անց է կացվել հանդիպում վերոնշյալ դպրոցների ուսուցչական կազմի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում ներկայացվել են բուհական կրթական ծրագրերը, դպրոց-բուհ համագործակցության հնարավորությունները և այլն: Կնքվել է համագործակցության հուշագիր Կապան քաղաքի N 5 դպրոցի հետ:

57. 2016թ. հոկտեմբերի 26-ին ԵՊԼՀ կրթության կառավարման և պլանավորման ամբիոնը, կարիերայի կենտրոնը և շրջանավարտների միավորումը իրականացրել են կլոր սեղան-քննարկում «Բուհ-գործատու համագործակցություն. կրթության կառավարման ծրագրերի վերջնարդյունքների համաձայնեցումը գործատուների ակնկալիքների հետ» խորագրով: Հանդիպման նպատակն էր հնարավորինս համապատասխանեցնել բուհական կրթական ծրագրերը աշխատաշուկայի պահանջներին և ՀՀ որակավորումների ազգային շրջանակի նկարագրիչներին՝ նպաստելով երիտասարդ մասնագետների ներգրավմանը տեղական և միջազգային աշխատաշուկա:

58. Օժանդակություն է ցուցաբերվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին 4-րդ կուրսի և մագիստրատուրայի ուսանողների շրջանում «ՀՀ աշխատաշուկայում զբաղվածության և կրթության փոխադարձ կապի հիմնախնդիրների վերհանում և ուսումնասիրություն» հետազոտության իրականացման համար:

59. ԵՊԼՀ 3 ներկայացուցիչ մասնակցել են Եվրոպական միության և ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ իրականացված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության զարգացում՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նպատակով» թվինինգ ծրագրի շրջանակներում կազմակերպված «Աշխատաշուկայում գործատուների և շրջանավարտների պահանջների համապատասխանության ապահովում» թեմայով սեմինարին /հունիս/:

60. ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի և ՀՀ ՊՆ Մարշալ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտի հետ կնքվել է 2016թ. համագործակցության պլան /փետրվար 12/:

61. ԵՊԼՀ ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Յ. Ակոպյանը մասնակցել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կազմակերպած «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում-փուլ 2-րդ» ԵՄ թվինինգ ծրագրի շրջանակներում «Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ» բաղադրիչի ներքո Դանիայի վիճակագրության փորձագետներ Անեզիտ Վալֆի և Լարս Թյուգեսենի հետ հանդիպմանը /մարտ 2/:

62. ԵՊԼՀ ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Յ. Ակոպյանը մասնակցել է բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման գործընթացի, որակի, արդյունավետության և թափանցիկության նպատակով Ադվերանում կազմակերպված քննարկում-խորհրդակցությանը՝ հարցաթերթերի, ցուցանիշների և մեթոդաբանության լրամշակման նպատակով:

63. ԵՊԼՀ-ն մասնակցել է «Կրթություն 21-րդ դարում» խորագրով միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին /մարտ 30-ապրիլ 1/:

64. ԵՊԼՀ-ն մասնակցել է ՀՀ Սփյուռքի նախարարության և ԵՊՀ հայագիտության կենտրոնի ամառային դպրոցի շրջանակներում կազմակերպված ցուցահանդեսին:

65. ԵՊԼՀ-ն իր մասնակցությունն է ունեցել ԱՊՀ 25-ամյակի տոնակատարությունների շրջանակում անդամ երկրների սոցիալ-տնտեսական ձեռքբերումներին նվիրված ցուցահանդեսին /հունիս 9-13/:

66. ԵՊԼՀ-ն իր մասնակցությունն է ունեցել «EXPO RUSSIA ARMENIA plus IRAN» 7-րդ միջազգային ցուցահանդեսին /հոկտեմբեր 26-28/:

67. Մի շարք միջոցառումների կազմակերպման հարցում ԵՊԼՀ-ն համագործակցել է CHUMBO նախաձեռնող խմբի հետ:

68. Օժանդակություն է ցուցաբերվել Հայաստանի գրողների միության պատվավոր անդամ Կիմ Բակշիի «Արցախի հոգևոր գանձեր» գրքի տարածման գործում:

69. Օժանդակություն է ցուցաբերվել «Ֆիշ այ արթ» մշակութային հիմնադրամին «Վերջին բնակիչը» ֆիլմի վերաբերյալ տեղեկատվություն տարածելու հարցում:

70. Օժանդակություն է ցուցաբերվել ՀՀ մշակույթի նախարարությանը Մյունխենում անցկացված «Der 66 Interationale Musikwettbewerb der ARD 2017» ամենամյա երաժշտական միջազգային մրցույթի կազմակերպչական աշխատանքներին:

71. Սերո Խանգադյան տուն-թանգարան բարեգործական մշակութային հիմնադրամի թանգարանային ֆոնդը բուհական գրականությամբ համալրելու նպատակով որպես նվիրատվություն հիմնադրամին տրամադրվել է շուրջ 5 տասնյակ միավոր գրականություն:

72. ԵՊԼՀ սոցիալական զարգացման և ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Յ. Ակոպյանը մասնակցել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կազմակերպված կրթության մշակների օրհնության հանդիսությանը /օգոստոս 31/:

73. Հաշվետու տարում ԵՊԼՀ-ն համագործակցել է ՀՀ-ում և Արցախում գործող երգչախմբերի հետ:

74. Աշխատանքներ են իրականացվել ԵՊԼՀ հանրային կապերի, ներքին և արտաքին հաղորդակցության ոլորտներում քաղաքականության վերաբերյալ համապատասխան ծրագրերի մշակման և իրականացման, բուհին վերաբերող հրապարակումների վերլուծության, ԵՊԼՀ վարկանիշի և հեղինակության էլ ավելի բարձրացման, խորհրդանիշների ու քարոզչական այլ նյութերի տարածման, էլեկտրոնային միջոցների, ԵՊԼՀ-ին առնչվող տեսանյութերի մշակման ու մի շարք այլ աշխատանքային ուղղություններով:

75. Շարունակվել է համագործակցությունը հայաստանյան լրատվամիջոցների հետ՝ ԵՊԼՀ-ում կազմակերպված միջոցառումները լուսաբանելու նպատակով:

2016թ.-ին ստացվել է հանրային նշանակության միջոցառման շուրջ 50 հայտ: Շուրջ 30 մամուլի հաղորդագրություններ են ուղարկվել ՁԼՄ-ներին:

Իրականացվել է տպագիր ՁԼՄ-ներում և ինտերնետային կայքերում ԵՊԼՀ-ին վերաբերող հրապարակված նյութերի մոնիթորինգ: Համապատասխան նյութերը յուրաքանչյուր օր ներկայացվել են ԵՊԼՀ ղեկավարությանը, իրականացվել է նյութերի վերլուծություն:

76. Կապեր են հաստատվել նոր ձևավորված զանգվածային լրատվության միջոցների հետ:

77. Համագործակցություն է հաստատվել «Ճամփորդ» շաբաթաթերթի հետ, որտեղ նյութեր են տպագրվել ԵՊԼՀ մասին:

78. ԵՊԼՀ-ի վերաբերյալ եռալեզու տեղեկատվություն է տեղադրվել «Սփյուռ» և «Գլոբալ ինֆո» տեղեկատվություններում:

79. ԵՊԼՀ վերաբերյալ տեղեկատվություն է տեղադրվել «Դիմորդ-2016» տեղեկատվություն և www.education.am ինտերնետային կայքում:

80. ԵՊԼՀ մասնաշենքերում առկա հեռուստաէկրաններին տեղեկատվություն և հայտարարություններ են տեղադրվել ԵՊԼՀ-ում կայանալիք միջոցառումների վերաբերյալ:

81. Հետևողական աշխատանք է կատարվել ԵՊԼՀ խորհրդանիշների մասսայականացման ուղղությամբ:

82. Զարգացել են ինտերնետային ռեսուրսները, համացանցային տիրույթում տեղեկատվություն և տեսանյութեր են տարածվել ԵՊԼՀ վերաբերյալ: Թարմացվել է ԵՊԼՀ պաշտոնական ինտերնետային կայքը /www.yslu.am, www.brusov.am/: Կայքի օրական այցելուների միջին թիվ անցում է 700-ից:

Շահառուների հետ ապահովվել է առցանց հետադարձ կապ, ինչպես նաև մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով ստացված նամակները:

Սոցիալական ցանցերում վարվել են ԵՊԼՀ էջերը, մասնավորապես facebook-ի /<https://www.facebook.com/YSLU.V.Brusov//> տիրույթում բազմաթիվ այցելուներ հնարավորություն են ունեցել ծանոթանալու ԵՊԼՀ-ում տեղի ունեցող իրադարձություններին /ԵՊԼՀ Facebook-ի նոր էջի հետևորդների ընդհանուր թիվը հասել է 5200-ի/:

83. ԶԼՄ-ների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ԵՊԼՀ-ին հասցեագրված հարցումներին օրենքով սահմանված ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:

84. Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են 66 լուսանկարահանումներ, ընդհանուր թվով՝ 3543 լուսանկար: Համապատասխան բաժնի աշխատակիցները ԵՊԼՀ-ում կայացած միջոցառումների լուսանկարներով ապահովել են ինչպես համալսարանական, այնպես էլ հանրապետական մամուլը:

85. ԵՊԼՀ հասարակայնության հետ կապերի պատասխանատուների կողմից կազմվել է ԵՊԼՀ 2017թ. PR պլանը:

86. ԵՊԼՀ աշխատակիցների և ուսանողների համար ապահովվել է արագ ինտերնետ:

87. Կատարվել են ընթացիկ համակարգչային տեխնիկայի վերանորոգման և ցանցի սպասարկման աշխատանքներ: Ապահովվել է տեխնիկայի սպասարկումը ԵՊԼՀ-ում կայացած տարբեր միջոցառումների ժամանակ: Համապատասխան բաժնի աշխատակիցները մշտապես աջակցել են ԵՊԼՀ աշխատակիցներին և սովորողներին համակարգչային տեխնիկայի շահագործման հետ կապված խնդիրներում: Տրամադրվել է համակարգչային ծրագրերին և տեխնիկային վերաբերող խորհրդատվություն, տարվել են բացատրական աշխատանքներ համակարգչային անվտանգության ուղղությամբ:

88. ԵՊԼՀ ներկայացուցիչները ակտիվորեն մասնակցել են ՀՀ «Բարձրագույն կրթության մասին» օրենքի նախագծի մշակման աշխատանքներին:

89. Ներհաձամալսարնական կարգերի վերամշակման հանձնաժողը քննարկել և պատրաստել է մի շարք նոր կանոնակարգեր, որոնք ընդունվել են Գիտական խորհրդի կողմից՝

- «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի մեթոդական խորհրդի» կանոնակարգ /19.04.2016/
- «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման գործընթացի կազմակերպման» կանոնակարգ /24.05.2016/
- «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման» կանոնակարգ /23.06.2016/:

90. Վերանայվել են ԵՊԼՀ տարբեր տարակարգերի աշխատակիցների և ուսանողների հետ կնքվող պայմանագրերի բովանդակությունը:

7. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հաշվետու ժամանակահատվածում ԵՊԼՀ-ն սերտորեն համագործակցել է տարբեր նվազախմբերի, թատրոնների, թանգարանների, պատկերասրահների և այլ մշակութային հաստատությունների հետ: ԵՊԼՀ աշխատակիցները և ուսանողները հնարավորություն են ունեցել անվճար մասնակցելու տարաբնույթ ներկայացումների:
2. ԵՊԼՀ աշխատակիցները ձեռք են բերել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության իշխանությունների նախաձեռնած Արցախի ազգային վիճակախաղի 4-րդ խաղարկության 200 տոմս:
3. Կատարալեզործվել է ուսման վարձերի հավաքագրման փաթեթային համակարգը. բոլոր կուրսերի սոցիալապես անապահով 261 ուսանողներ հնարավորություն են ստացել ուսման վարձը վճարել մաս-մաս:
4. Ուսման վարձը մաս-մաս վճարելու հնարավորություն է տրվել նաև պետության կողմից տրամադրվող սոցիալական փաթեթից օգտվող ուսանողներին:
5. Հաշվետու ժամանակահատվածում բուհի միջոցների հաշվին մասնակի կամ ամբողջությամբ փոխհատուցվել է 1078 ուսանողի ուսման վարձ՝ 63.002.875 ՀՀ դրամի չափով:
6. ՀՀ և Արցախի պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների և նրանց զավակների ուսման վարձի մասնակի փոխհատուցման գործընթացում հավասար մոտեցում է ցուցաբերվել ՀՀ և ԼՂՀ քաղաքացիների նկատմամբ:
7. 2016-17 ուստարվա 1-ին կիսամյակում ապրիլյան պատերազմին մասնակից 7 ուսանողների ուսման վարձը 50-ական տոկոսով փոխհատուցվել է բուհի կողմից:
8. Հայաստանի երիտասարդական հիմնադրամը մասնակի փոխհատուցել է 70 ուսանողների ուսման վարձը՝ 5.665.000 ՀՀ դրամի չափով:
9. 234 սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձի մեծ մասը փոխհատուցվել է ՀՀ Կառավարության կողմից՝ 24.907.750 ՀՀ դրամի չափով:

10. ԱՄՔՈՐ/Հայաստան բարեգործական հասարակական կազմակերպությունը մասնակիորեն փոխհատուցել է 25 ուսանողների ուսման վարձը՝ 1.850.000 ՀՀ դրամի չափով:
11. ՀՀ սփյուռքի նախարարությունը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը /ՀԲԸՄ/, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը մասնակի փոխհատուցել է սիրահայ 35 ուսանողների ուսման վճարի զգալի մասը՝ 4.599.000 ՀՀ դրամի չափով:
12. ԵՊԼՀ-ի, Կարիերայի կենտրոնի և «Վիվա Սել ՄՏՍ» ընկերության համագործակցության արդյունքում ԵՊԼՀ թվով 18 ուսանող ընկերության կողմից ստացել են կրթաթոշակ:
13. ԵՊԼՀ-ն 100.000 դրամ է փոխանցել «Քանաքեռ-Զեյթուն հաշմանդամների ընկերություն» ՀԿ-ին՝ մարտի 8-ին հաշմանդամ կանանց տրամադրելու նպատակով:
14. ԵՊԼՀ ուսանողները տեղեկացվել և մասնակից են դարձել «Երջանիկ ընտանիք» և «Ուսանող-բարեկամ» նախագծերին, ինչի շնորհիվ հնարավորություն են ունեցել Հայաստանում գործող 300-ից ավելի ընկերություններից ստանալ բավականին բարձր տոկոսներով զեղչեր:
15. Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել ԵՊԼՀ արհկոմիտեի հերթական համագումարը: Համագումարի պատվիրակները հաստատել են Արհկոմիտեի նախագահի հաշվետվությունը և ընտրել են կոմիտեի նոր կազմ:
16. ԵՊԼՀ արհկոմիտեի կողմից իրականացվել են բազմաթիվ սոցիալական ծրագրեր: Արհկոմիտեն իր միջոցների հաշվին, որպես օգնություն, ԵՊԼՀ աշխատակիցներին տրամադրել է 2.135.000 ՀՀ դրամի օգնություն:
17. Շարունակվել են տոնական միջոցառումների առիթով համալսարանում բարի ավանդույթ դարձած տարաբնույթ սոցիալական միջոցառումների ձեռնարկումը: Այսպես, ԵՊԼՀ աշխատակիցների և նրանց երեխաների համար կազմակերպվել են տարբեր միջոցառումներ, որոնց համար ծախսվել է 951.000 ՀՀ դրամ:

18. ԵՊԼՀ կին աշխատակիցների համար իրականացվել է Կանանց միջազգային օրվան՝ Մարտի 8-ին, նվիրված համահամալսարանական միջոցառում, որի համար ԵՊԼՀ արհկոմիտեն տրամադրել է 750.000 դրամ:
19. ԵՊԼՀ արհկոմիտեն միջոցառումներ է կազմակերպել նաև Ամանորի և Սուրբ ծննդյան տոների առթիվ՝ իր միջոցներից ծախսելով 650.000 դրամ:
20. ԵՊԼՀ արհկոմիտեն բժշկական փաստաթղթերի հիման վրա աշխատակիցներին տրամադրել է 75 տեղեկանք անաշխատունակության մասին:
21. ԵՊԼՀ բոլոր աշխատակիցներին հնարավորություն է տրվել անճար հիմունքներով բժշկական զննություն անցնել:

8. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Հակակոռուպցիոն միջոցառումները հանդիսանում են Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի գործունեության կարևոր ռազմավարական ուղղություն: 2016թ. ապրիլի 13-ին ԵՊԼՀ գիտական խորհրդի կողմից հաստատվեց «ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2016թ. համալիր միջոցառումների ծրագիրը» /Տես՝ *Հավելված 3/*, որի նպատակն էր ԵՊԼՀ-ում նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը և ամրապնդել ԵՊԼՀ վարչական ու պրոֆեսորադասախոսական կազմի նկատմամբ շահառուների վստահությունը:

ԵՊԼՀ ռազմավարության բազմաթիվ դրույթներ, որոնք մասնավորապես վերաբերում են կրթության որակի բարձրացմանը, հանրային կապերի զարգացմանը, կադրային քաղաքականությանը, տեղեկատվական ռեսուրսների զարգացմանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, ուսանողական ինքնավարության ընդլայմանը և մի շարք այլ հարցերին, միաժամանակ ունեն հակակոռուպցիոն կարևոր ազդեցություն:

ԵՊԼՀ ռեկտորի 2012թ. հոկտեմբերի 8-ի հրամանով ստեղծված Հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման հանձնաժողովի՝ յուրաքանչյուր տարվա համար ներկայացրած ծրագրերը ԵՊԼՀ-ում կոռուպցիոն երևույթների դեմ արդյունավետ պայքարի հիմնական ուղենիշն է, քանի որ դրանում արտացոլված են գոյություն ունեցող կոռուպցիոն դրսևորումների դեմ նպատակային պայքարի հիմնական միջոցառումները, դրանց իրականացման արդյունքում ակնկալվող ուղղակի արդյունքները, սահմանված են պատասխանատու ստորաբաժանումները և գործողությունների իրականացման ժամկետները: Ծրագրերը պահանջում են հակակոռուպցիոն գործիքակազմի ճշգրիտ ընտրություն, արդյունավետ ու համապարփակ միջոցառումների համալիր իրականացում՝ հնարավորինս ապահովելով հստակ, գնահատելի և իրատեսական արդյունքներ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է նաև հակակոռուպցիոն ծրագրի մշտական մոնիթորինգ:

ԵՊԼՀ գիտական խորհրդի 23.02.2016թ. հ. 8 նիստի որոշմամբ ստեղծվել է ԵՊԼՀ գիտական խորհրդին կից Էթիկայի հանձնաժողով: Հանձնաժողովը պետք է մշակի ԵՊԼՀ Էթիկայի կանոնագիրքը, քննության առնի Էթիկայի խախտման յուրաքանչյուր դեպք:

ԵՊԼՀ հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման հանձնաժողովը 2017թ. փետրվարին գիտական խորհրդին է ներկայացնելու 2016թ. կատարված աշխատանքների հաշվետվություն:

ԵՊԼՀ ռեկտորի նախագահությամբ գործող հանձնաժողովը պարբերաբար հրավիրել է նիստեր և իրականացրել հակակոռուպցիոն միջոցառումների մշտադիտարկում: Հանձնաժողովը պատրաստել և Գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացրել 2017թ. կոռուպցիոն երևույթների դեմ համալիր պայքարի ծրագիրը:

ԵՊԼՀ հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման հանձնաժողովի անդամները մասնակցել են մի շարք համապետական և միջազգային միջոցառումների, մասնավորապես՝

- ԵՊԼՀ ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Յ. Ակոպյանը մասնակցել է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց Էթիկայի հանձնաժողովի կազմակերպած «Էթիկայի կրթություն» խորհրդաժողովին /հունվար 26/
- ԵՊԼՀ 3 ներկայացուցիչ մասնակցել են Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակներում փորձագետների կողմից մշակված բարձրագույն ուսումնական հաստատություններում կադրային մոտեցումների և խնդիրների լուծման հարցում հաշվետվողականության և թափանցիկության բարձրացմանն ուղղված գործիքակազմի նախագծի ֆուկուս խմբային քննարկումներին /նոյեմբեր 21, 23/
- ԵՊԼՀ սոցիալական զարգացման և ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Յ. Ակոպյանը մասնակցել է Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակներում իրականացվող բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման ոլորտում

թափանցիկության և հաշվետվողականության խթանման գործիքակազմի մշակման աշխատանքներին:

- Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի ամփոփիչ համաժողովին մասնակցել են ԵՊԼՀ 3 ներկայացուցիչ:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված միջոցառումները ունեցել են հետևյալ խնդիրները՝

1. Ապահովվել կրթական գործընթացում կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործընթացների թափանցիկությունն ու հրապարակայնությունը, նվազեցնել այդ ոլորտում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը:
2. Ամրապնդել անհանդուրժողական մթնոլորտ կոռուպցիոն երևույթների նկատմամբ:
3. Բարձրացնել կոլեկտիվի իրազեկվածությունը:
4. Կատարելագործել կոռուպցիոն ռիսկեր պարունակող ներքուհական ակտերը:
5. Վերահսկողություն իրականացնել ԵՊԼՀ-ում իրականացվող ընդունելության գործընթացի նկատմամբ:
6. Խթանել ուսանողների մասնակցությունը հակակոռուպցիոն միջոցառումներում:
7. Կատարելագործել կառավարման գործընթացը:
8. Իրականացնել կոռուպցիայի և դրա կանխարգելմանն ուղղված տարաբնույթ հետազոտական ուսումնասիրություններ, ուսումնասիրել միջազգային փորձը:
9. Իրականացնել հակակոռուպցիոն միջոցառումների արդյունքների մոնիթորինգ, ապահովել ուսանողների և շրջանավարտների հետ հետադարձ կապը:

9. ԵՊԼՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԵՊԼՀ ուսանողական խորհուրդը 2016 թվականին իրականացրել է ծրագրեր հետևյալ հիմնական ուղղություններով՝ **ուսումնագիտական, ուսանողական գիտական, բարեգործական, մշակութային, ժամանցային և սպորտային, ինտելեկտուալ և բանավեճային:**

01.05.16 - ԵՊԼՀ ԹՄՀՖ ՈԻԽ-ն կազմակերպեց մայիսյան հաղթանակներին նվիրված նամակների մրցույթ «Պատերազմից մոխրացած նամակներ» խորագրով:

13.05.16 - ԹՄՀՖ ՈԻԽ-ն այցելեց Եռաբլուր:

18.05.16 - Կայացավ ԵՊԼՀ ԹՄՀ ֆակուլտետի կազմակերպած «Մեռնել հանուն հայրենիքի նշանակում է ապրել» խորագրով միջոցառումը:

14.10.16 - ՕԼ ՖՈԻԽ-ն այցելեց Մոսկվա կինոթատրոն՝ դիտելու « Կյանք ու կռիվ » ֆիլմը:

29.10.16 - Այց Կոմիտասի անվան թանգարան:

28.01.16 - Ցերեկույթ նվիրված ռուս հայտնի բանաստեղծ, երգահան և դերասան Վլադիմիր Վիսոցկու 78 ամյակին:

ՈւԳԸ

25.02.16 - Թումանյանական ցերեկույթ

21.04.16 - Ուսանողական գիտական ընկերությունը մասնակցեց ԵՊՀ ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ կողմից կազմակերպված «Աշունը գրչիս տակ» խորագրով գեղարվեստական թարգմանությունների ամենամյա մրցույթին և արձանագրեց ԲԱԸՁԸ ցուցանիշներ:

27.04.16 - Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում կայացավ ամենամյա ուսանողական հանրապետական գիտաժողով, որին մասնակցել է նաև ԵՊԼՀ ՈԻԽ Ուսանողական գիտական ընկերությունը:

25.04.16-29.04.16 - ԵՊԼՀ ՈԻԽ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ գիտական ընկերությունը մասնակցեց ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպած հերթական տարեկան գիտական նստաշրջանին:

13.05.16 - Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի և ԵՊՀ ՈւՄ ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպվեց «Հիշել, ապրել, արարել» խորագրով միջոցառումը:

28.10.16 - ԵՊՀ ՈւՄ ՈԻԳԸ-ն կազմակերպեց «Ինչ է լիդերությունը» թեմայով սեմինար: 17.03.16-18.03.16-ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպված «Հումանիտար և հասարակական գիտությունների արդի հիմախնդիրները» թեմայով միջբուհական գիտաժողով

Ուսումնական գործընթացի կազմակերպման հանձնաժողով

23.02.2016 - Հանդիպում կազմակերպեց «Մերունդ համահայկական երիտասարդական կենտրոնի» ներկայացուցիչների հետ:

04.03.16 - Հանդիպում ԵՊՀ ուսանողների և «Հայ առաջավոր երիտասարդություն» ՀԿ-ի միջև:

06.03.2016 - “American Culure” թեմայով սեմինար Ամերիկյան անկյունի կամավոր Էլլի Վուլֆի հետ:

15-20.03.2016 - «Ժառանգն եմ ես 1.500.000 հայի» թեմայով շարադրությունների մրցույթ՝ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի աջակցությամբ:

05.05.16 - «ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԵՆ ԲԴՅՈՒՍՈՎԱԿԱՆՆԵՐԸ» լայնամասշտաբ ծրագրի 3-րդ փուլի բացման արարողությունը:

06.05.16 - Տեղի ունեցավ ԵՊՀ ՈւՄ Ուսումնական գործընթացի կազմակերպման հանձնաժողովի «Գենդերային հավասարություն» թեմայի շուրջ կազակերպած սեմինարը:

28.09.16 - Տեղի ունեցավ հանդիպում 1-ին կուրսի ավագների հետ:

04.11.16 - Տեղի ունեցավ «Դասավանդում են բրյուսովականները» խորագրով անվճար ուսուցման եռամսյա ծրագրի 3-րդ փուլի հանդիսավոր փակումը:

24.04.2016 - Ցեղասպանությանը 100-րդ տարելիցին նվիրված հոդվածի տպագրում Կոլումբիայի “EL ESPECTADOR” թերթում:

03.05.2016 - «Գարեգին Նժդեհ: Ցեղակրոնություն և պահպանողականություն» թեմայով սեմինար:

10.05.2016 - «Պատերազմից մոխրացած նամակներ» խորագրով մրցույթ:

Բարեգործական հանձնաժողով

27.03.2016 - Բարեգործական ֆուտբոլային խաղ ԵՊԼՀ և ՀԱՀ համալսարանների ֆուտբոլի թիմերի միջև Դինամո մարզադաշտում:

05.04.2016 - Դրամահավաք Էլենի ընտանիքի համար: Վերջինս տառապում է շատ հազվադեպ հանդիպող ցիստինոզ հիվանդությամբ /50 000դր/:

05.04.16 - Սահմանում կովող զինվորների համար անհրաժեշտ իրերի հավաքագրում:

09.05.2016 - Դրամահավաք կոպիտ հենաշարժողական ֆունկցիայի խախտում /դիսկինեզիա/ հիվանդությամբ տառապող Վաղարշակ Ղևոնդյանին օգնելու համար (280 000 դրամ):

20.04.16 - ԵՊԼՀ ՈԼԽ-ն բարեգործական հանձնաժողովի նախաձեռնությամբ հյուրընկալեց Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտներին:

20.06.16 - Բարեգործական հանձնաժողովը բարեգործական ծրագրով ուղևորվեց Տավուշի մարզ՝ Խաչարձան գյուղ:

05-11.11.2016 - Դրամահավաք Սլավա Սարգսյանի համար, ով 3-րդ կարգի հաշմանդամ է և կարիք ունի բազում դեղերի /50 000/:

13.11.2016 - Բարության միջազգային օրվա նշում ինչպես համալսարանում, այնպես էլ համալսարանից դուրս:

13-30.11.2016 - «Մեկ բացիկ = մեկ բնակարան 3» ծրագրի շրջանակներում ուսխորհրդականները վաճառեցին 400դրամ սիմվոլիկ արժեք ունեցող 165 բացիկ:

14.11.12 - ԵՊԼՀ ՈԻԽ բարեգործական հանձնաժողովը այցելեց Սլավա Սարգսյանին: Հանձնաժողովը ֆինանսական օգնություն ցուցաբերեց՝ նրա որդու՝ Դավիթ Սարգսյանի (ծնված 1981թ.-ին, 3-րդ կարգի զնվորական հաշմանդամ) համար դեղորայք ձեռք բերելու նպատակով:

Մշակութային հանձնաժողով

19.02.2016 - Մ. Լերմոնտովի 200 ամյակին և ստեղծագործությանը նվիրված ցերեկույթ:

24.02.2016 - «Ես և Դու» խորագիրը կրող միջոցառումը՝ նվիրված սիրահարների տոնին:

04.03.2016 - Բուլղարական «Մարտենիցա» տոնի նշումը ԵՊԼՀ-ում:

11.03.16 - Պոեզիայի ցերեկույթ էր կազմակերպել՝ «Սահյանը մեր մեջ» խորագրով:

27.04.16 - ԵՊԼՀ ՈԻԽ մշակութային հանձնաժողովը մասնակցեց SPFA-ֆրանսիական բարեգործական կազմակերպությունում տեղի ունեցող ֆրանսական երգերի ամենամյա համերգ-մրցույթին:

05.12.2016 - Հանդիպում «Մեր բակը» դերասանական խմբի անդամների հետ:

11.12.16 - Կայացավ «Դե Տժժա» համերգային շրջագայությունների շրջանակում անցկացվող համերգային ծրագիրը:

Ժամանցի և սպորտի հանձնաժողով

16.02.16 - Տեղի ունեցավ սեմինար-քննարկում Campus Numérique Francophone D'Erevan (CNF) կազմակերպության և ԵՊԼՀ ՈԻԽ Ժամանցի և սպորտի հանձնաժողովի համագործակցությամբ:

17.02.16 - Սիրո տոնին նվիրված սեմինար «Մերը հավիտենական հարմոնիա» թեմայով:

19.02.16 - «All the bright places» գրքի քննարկում:

23.04.16 - «Մենք ժառանգն ենք 1.5 միլիոնի» ֆոտոշարք:

29.04.16 - Nicola Yoon-ի "Everything, everything" գրքի քննարկում:

30.04.16 - «Ծիծեռնակաբերդ» հուշահամալիրի տարածքում անցկացվեցին Կրոսավազքի մրցումներ:

30.04.16 - 02.05.16 - Տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության 25 ամյակին նվիրված «Ուսանողական գավաթ» մարզական խաղերի վոլեյբոլի աղջիկների առաջնությունը, որին մասնակցել են նաև Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ուսանողուհիները:

10.05.16 - Սլավոնական համալսարանում տեղի ունեցավ ՀՀ 25-ամյակին նվիրված «Ուսանողական գավաթ» մարզական խաղերի ծրագրի տղաների ֆուտբոլի մրցաշարի հերթական հանդիպումը:

11.05.16 - Տեղի ունեցավ ֆուտբոլային հանդիպում ԵՊԼՀ ՈԻԽ սպորտի հանձնաժողովի ֆուտբոլի թիմի և ոչ պետական բուհերի թիմի ուսանողների միջև:

28.05.16 - Ֆոտոշարք՝ ռետրո/ վինիլ թեմատիկայով:

06.14.16 - Տեղի ունեցավ ֆուտբոլային խաղ ԵՊՀ և ԵՊԼՀ համալսարանների ֆուտբոլային թիմերի միջև:

08.10.16 - Կազմակերպվեց պիկնիկ Թումոյի այգում:

12.10.16 - Սլավոնական համալսարանում տեղի ունեցավ շախմատի միջբուհական հերթական մրցաշար:

02.11.16 - ԵՊԼՀ դասախոսները և ուսանողները սկսեցին մասնակցել պարուսուցման անվճար մեկամսյա դասընթացների "Մալի Սպորտ-Բար" ֆիտնես ակումբում:

06.10.16 - «Մեկ օր սահմանին» ծրագրի շրջանակներում ԵՊԼՀ ՈԻԽ-ն այց կատարեց Արարատի գորամաս:

11.12.16 - Ֆուտբոլային հանդիպում ԵՊԼՀ-ի և ԵՊԿ-ի թիմերի միջև:

18.11.16 - «Արտագաղթած կարոտ» գրքի քննարկումը հեղինակի՝ Դավիթ Սամվելյանի հետ:

19.11.16 - Կազմակերպվեց «Գուշակիր մեղեդին» խաղ-մրցույթը՝ հանձնաժողովի անդամների միջև:

Բանավեճի ակումբ

15.02.16 - Բանավեճ՝ «Հաշմանդամ երեխաների իրավունքները պաշտպանված են ՀՀ-ում» թեմայով

19.02.16 - Բանավեճ՝ «Արդյո՞ք նոր տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է կրթության զարգացմանը»

23.02.16 - Բանավեճ «Պատմամշակութային ժառանգությունը Հայաստանում պահպանված է» թեմայով:

11.04.16 - Բանավեճի ակումբի թիմը ունեցավ իր առաջին խաղը «Երբ բանավիճում են երիտասարդները» բանավեճի ակումբի կողմից կազմակերպված մրցաշարում:

29.04.16 - ԵՊԼՀ ՈԻԽ բանավեճի ակումբը պարգևատրվեց մեր ժամանակների հայ արձակի ակնառու ներկայացուցիչ, ուրույն ձեռագիր ու խորքային բովանդակություն ստեղծող Էդուարդ Խաչիկյանի ներկայությամբ՝ քննարկելու հեղինակային «Եվ արևը մայր մտավ լուսաբացին» իրապատում-վեպը:

10.05.16 - ԵՊԼՀ ՈԻԽ բանավեճի ակումբի սկսնակ ներկայացուցիչները ունեցան խաղ շատ արդիական թեմայով՝ «Արդյո՞ք ազատագրված տարածքները պետք է վերադարձվեն Ադրբեջանին հանուն խաղաղության»:

30.04.16 - Բանավեճի ակումբի թիմը ունեցավ իր երկրորդ խաղը «Երբ բանավիճում են երիտասարդները» բանավեճի ակումբի կողմից կազմակերպված մրցաշարում:

14.05.16 - Տեղի ունեցավ «Երբ բանավիճում են երիտասարդները» բանավեճի ակումբի եզրափակիչ փուլի առաջին խաղը:

21.05.16 - Տեղի ունեցան «Երբ բանավիճում են երիտասարդները» բանավեճի ակումբի եզրափակիչ փուլի վերջին երկու խաղերը:

30.09.16 - Բանավեճի ակումբում տեղի ունեցավ Բեթհովենի «Հավերժական սիրեցյալին» նամակի քննարկումը:

Ինտելեկտուալ ակումբ

27.02.16 - Ինտելեկտուալ խաղը՝ ՈԻԽ բոլոր ստորաբաժանումների միջև:

29.02.16 - Միջբուհական ինտելեկտուալ խաղ:

05.03.16 - ԵՊԼՀ ՈԻԽ ստորաբաժանումների ներկայացուցիչների միջև տեղի ունեցավ ինտելեկտուալ խաղ ֆուտբոլային թեմատիկայով:

29.04.16 - ԵՊԼՀ ՈԻԽ ինտելեկտուալ ակումբը կազմակերպեց նոր ֆորմատով խաղ՝ «Ինտելեկտուալ պոկեր»:

22.09.16 - Երևանում Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղում կայացավ միջբուհական ինտելեկտուալ խաղ:

27.09.16 - Տեղի ունեցավ ինտելեկտուալ խաղ՝ Օտար լեզուների ֆակուլտետի առաջին կուրսի խմբերի միջև:

14.10.16 - Տեղի ունեցավ ինտելեկտուալ խաղ՝ ՌՕԼՄՀ ֆակուլտետի 1-ին կուրսեցիների միջև:

**ԵՊԼՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ԵՎ
ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԾՐԱԳՐԵՐԻ**

07.02.2016 – Մասնակցություն «Ես ուսանող եմ» լուսանկարների միազգային մրցույթին՝ «Գեղարվեստական արժեքի համար» անվանակարգում զբաղեցնելով առաջին, իսկ «Հումորի համար» անվանակարգում՝ 3-րդ տեղերը:

19.02.2016 - Մասնակցություն Բարեկանդանի տոնակատարության /15 ուսանող/:

04.03.2016 - Մասնակցություն «Հայկյան 2016» մրցանակաբաշխությանը:

14.03.2016 - «Երբ բանավիճում են երիտասարդները» մրցաշարին կազմակերպված քաղաքապետարանի կողմից՝ գրավելով առաջին տեղը:

20.03.2016 - Մասնակցություն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների 16-րդ հանրապետական մարզական խաղերի ԿՐՈՍԱՎԱԶՔԻ առաջնությունում՝ գրավելով 2-րդ տեղը:

24.04.2016 - Մասնակցություն Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ծրագրին /200 ուսանող/:

20.06-16.08.2016 - Մասնակցություն Հանքավանում և Ծաղկաձորում անցկացվող ամառային ճամբարներին /50 ուսանող/:

22-27.08.2016 - Մասնակցություն «Բազե 2016» համահայկական երիտասարդական հավաքին:

01-08.10.2016 - Մասնակցություն “High Fest 2016” միջազգային թատերական փառատոնին /65 ուսանող/:

11.10.2016 - Մասնակցություն Երևանի վազքի միջազգային առաջին կիսամարաթոնին /45 ուսանող/:

11.10.2016 - Մասնակցություն «Էրեբունի-Երևան-2797» տոնակատարությանը:

10. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում

1. Ավարտվել է համալսարանի 1-ին և 2-րդ մասնաշենքերի տանիքի վրա մանսարդային հարկի /1850 քառ.մետր մակերեսով/ շին մոնտաժային աշխատանքները, եվրոպատուհանների տեղադրումը, գունավոր ցինկապատ ալիքավոր թիթեղյա տանիքների մոնտաժումը և ջերմամեկուսացումը, արտաքին պատերի հարդարումը, բացի 2-րդ մասնաշենքի բակի ճակատային մասից:

Շինարարական կազմակերպության հետ կնքված կապալային պայմանագիրը երկկողմ համաձայնությամբ դադարեցվել է:

2.Գլխավոր մասնաշենքը սնուցող ներգետնյա ջեռուցման խողովակները վթարից հետո փոխարինվել են նոր $\Phi=75$ մմ. տրամագծով մետաղական խողովակներով, կատարվել է 25 գծ.մ. սառած գրունտի խրամատների փորում:

3.Պատրաստվել է համալսարանի Թումանյան 42 հասցեի կաթսայատան վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերը, որից հետո սկսվել և ավարտվել է կաթսայատան վերազինման շինարարական աշխատանքները, 2 չուգունյա 336 կվտ. հզորության կաթսաները փոխարինվել են նոր ավելի հզոր՝ 365 կվտ. հզորության 2 կաթսաներով: Հին ցանցային պոմպերը փոխարինվել են նոր՝ ավելացված հզորություններին համապատասխան տեխնիկական տվյալներ ունեցող պոմպերով: Չաշխատող սողնակային փականները և ճնշաչափերը փոխարինվել են նորերով:

4. Ավարտվել է ուսումնական մասնաշենքի 2-րդ հարկում /203 սենյակ/ 42 քառ.մետր մակերեսով Չինագիտության կենտրոնի հիմնավոր վերանորոգումը: Վերանորոգման ընթացքում կատարվեցին պատերի հարդարման և ներկման աշխատանքներ, տեղադրվեցին կախովի առաստաղներ, փոխվեցին ջեռուցման համակարգի խողովակները և մարտկոցները:

Հիմնավոր անցկացվել են նոր էլ. հոսանքի լարեր իրենց անջատիչներով և վարդակներով:

Հատակները ծածկել են լամինատով, տեղադրվել են նոր էլ. լուսատու լումինիսցիտային լամպեր: Սենյակն ապահովվել է նաև անվտանգության սարքերով:

5. Ավարտվել է ուսումնական մասնաշենքի 1-ին հարկում 42 քառ. մետր ընդհանուր մակերեսով ԵՊԼՀ համալսարանական շարունակական կրթության կենտրոնի հիմնավոր վերանորոգումը:

6. Համալսարանի տնտեսական մասի աշխատակիցների ուժերով 800 քառ. մետր ընդհանուր մակերեսով մասնակի վերանորոգվել են համալսարանի կաբինետները և միջանցքները:

Հիմնովին վերանորոգվել է ընդունող հանձնաժողովի 38 քառ.մետր տարածքով սենյակը, պատի մեջ ներկառուցվել է գրապահարան:

7. Գրադարանի մասնաշենքի 2-րդ հարկում լեզվի կենտրոնի ազատված 36 քառ. մետր տարածքը աշխատակիցների ուժերով հարդարվել, ներկվել և տրամադրվել է Կոնֆուցիուսի ինստիտուտին, նպաստելով ինստիտուտի աշխատանքային պայմանների բարելավմանը:

8. Վերանորոգվել են մետաղական կարկասով դուրս գրման ենթակա՝ կոտրված կիսափափուկ աթոռները և ուսանողական նստարանները /թվով 52 հատ/, տնտեսվել է մոտավորապես 350.000 դրամ:

9. Համալսարանի կաթսայատան հնոցապահների շնորհիվ, պահպանելով մասնաշենքերի ներքին ջերմային ռեժիմը հաշվետու ժամանակահատվածում համեմատած նախորդի տնտեսվել է մոտավոր 2800 մ.խորանարդ գազի ծախս:

10. Աշխատակիցների ուժերով կատարվել է 28 քառ.մետր ընդհանուր մակերեսով լամինատե հատակների մոնտաժում իր շրիշակներով մատակարարման բաժնի աշխատակիցների սենյակում:

11. Համալսարանի տնտեսական մասի աշխատակիցների ուժերով միշտ մաքրվել են արտաքին և ներքին կոյուղագծերը, վերանորոգվել են փայտյա գրասենյակային և ուսանողական կահույքը, վերանորոգվել են ծորակները, ջրի մղման պոմպը:

Օդային ճանապարհով մոնտաժվել է 150 գծային մետր էլ.լար 50 մմ. կտրվածքով վթարված եռաֆազ հոսանքի մալուխի զրոյականը վերականգնելու համար:

Վերը նշված աշխատանքները խթանել են համալսարանի տնտեսական մասի ծախսերի զգալի նվազեցմանը:

Կատարված աշխատանքների նկարները ներկայացված են հավելված 4-ում:

11. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ